

PARLIAMENT
MONITORING

08.09.2014 - 17.12.2014

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ**

5-րդ գոտսարուս | 6-րդ ՆԱՏՇՐՋԱՆ | 5-րդ ԶԵԿՈՒՅՑ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆՐԱՏ» լեղելատվական հասարակական կազմակերպություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ | 5-ՐԴ ԶԵԿՈՒՅՑ
08.09.2014 - 17.12.2014

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել
Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
կազմակերպության օժանդակության շնորհիվ,
դրամաշնորհ N18799: Ձեկույցում տեղ գտած
տեսակետները և վերլուծությունները արտահայտում
են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել
Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 5-րդ գումարման Ազգային ժողովի 6-րդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Զեկույցը կազմված է 4 բաժնից: Առաջին բաժնում ամփոփվել են 6-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու սուբստանցիաները, ներկայացվել են ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին տվյալներ:

«Օրենսդրություն» բաժնում ներառվել են աշնանային նստաշրջանի ընթացքում օրենսդրական գործընթացի առանձնահատկությունները, ընդունված օրենսդրական փաթեթներից մի քանիսի դիտարկման արդյունքները: «ԱԺ վերահսկողությունը» բաժնում անդրադարձ է կատարվել ԱԺ վերահսկողական գործառույթներին: Դիտարկվել են նստաշրջանի ընթացքում ներկայացված հաղորդում-հաշվետվությունները՝ օրենքով սահմանված ընթացակարգերի և խորհրդարանական քննարկումների արդյունավետության տեսանկյունից:

Չորրորդ բաժնում ամփոփվել են 5-րդ գումարման Ազգային ժողովում իր գործունեությունը սկսած Էթիկայի հանձնաժողովի աշխատանքի արդյունքները:

Զեկույցի վերջին՝ «Հավելված» բաժնում ներառված են օրենքների փորձագիտական վերլուծությունները:

Փորձագիտական խումբ

Գոռ Աբրահամյան
Վիլեն Խաչատրյան
Վահագն Ղազարյան

ՑԱՆԿ

Նստաշրջանը թվերով	4
ԱԺ խմբակցություններ / օրենսդրական նախաձեռնություններ, ակտիվություն /	8
Հայաստանի հանրապետական կուսակցություն	8
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	10
Հայ ազգային կոնգրես	11
«Ժառանգություն» խմբակցություն	12
«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն	13
«Օրինաց երկիր» խմբակցություն	14
ԱԺ վերահսկողությունը	16
ԱԺ օրենսդրական գործունեությունը	29
ԱԺ էթիկայի հանձնաժողովը	44
Փորձագիտական վերլուծություններ Հավելված	48

ՆՍԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 4-ՐԴ ՆՍԱՇՐՋԱՆ

Ցույանիշներ կամ նստաշրջանը թվերով

Հինգերորդ գումարման Ազգային ժողովի 6-րդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 քառօրյա և 3 արտահերթ նիստ. 1-ը՝ կառավարության, 2-ը՝ ԱԺ պարզամավորների նախաձեռնությամբ: Կայացել է միայն կառավարության հրավիրած արտահերթ նիստը: Նստաշրջանի ավարտից հետո հրավիրվել է 4 արտահերթ նստաշրջան. 1-ը՝ կառավարության, 3-ը՝ ԱԺ պարզամավորների նախաձեռնությամբ: Դրանցից մեկը՝ հրավիրված միայն ոչ իշխանական խմբակցությունների կողմից, չի կայացել:

ԱԺ աշնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում խորհրդարանն ընդունել է 132 օրենք (46 օրենսդրական նախաձեռնություն), որոնցից 12-ը «մայր» օրենքներ են, իսկ 117-ը՝ փոփոխություններ ու լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 13-ի հեղինակը ԱԺ պարզամավորներն են, 119-ինը՝ ՀՀ կառավարությունը: Օրենքների գրեթե կեսը՝ 64-ը, ընդունվել է արտահերթ նստաշրջանների ընթացքում:

Ընդունված օրենքների գերակշիռ մասը վերաբերում է փոփոխական (63), պետաիրավական (24) և սոցիալական (14) ոլորտներին:

Նստաշրջանի ընթացքում մերժվել է 2 որոշման նախագիծ և 3 օրենսդրական նախաձեռնություն:

ԱԺ-ն վավերացրել է 16 միջազգային պայմանագիր, քննարկել է Հանրային հեռուստառադիոընկերության 2013 թ. գործունեության վերաբերյալ ՀՀՌԽ հաղորդումը և ՄԻՊ 2013 թ. փարեկան զեկույցը:

Ցույանիշներ կամ նստաշրջանը թվերով

■ 5-րդ գումարման խորհրդարանը գրեթե միաձայն (103 կողմ, 7 դեմ, 1 ձեռնպահ) վավերացրել է Եվրասիական փոփոխական միությանը Հայաստանի անդամակցությունն ամրագրող պայմանագիրը: Խորհրդարանական 6 ուժերից 5-ը կողմ քվեարկեց պայմանագրին, դեմ էր միայն «Ժառանգություն» խմբակցությունը:

■ Մաքսային գործող ընթացակարգերը ԵԱՏՄ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ներկայացված օրենսդրական փաթեթն ընդունվել է խորհրդարանական 6 ուժերից միայն 2-ի՝ ՀՀԿ-ի և ՀՅԴ-ի քվեարկությամբ (71 կողմ, 5 դեմ): ԱԺ 4 խմբակցությունները բոյկոտում էին դեկտեմբերի 17-ին կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանը:

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ


- Շարունակելով ձևավորված ավանդույթը՝ խորհրդարանն արտահերթ նիստի և նստաշրջանի ընթացքում ընդունել է գրեթե այնքան օրենք, որքան ողջ հերթական նստաշրջանի ընթացքում. 132 օրենքից 64-ն ընդունվել է արտահերթ նստաշրջանների ընթացքում:
- Խախտելով օրենքով նախատեսված ընթացակարգերը՝ նստաշրջանի ընթացքում խորհրդարանը քննարկել, բայց չի քվեարկել Վերահսկիչ պալատի 2015թ. գործունեության ծրագիրը, չի քննարկել նույն կառույցի 2013թ. տարեկան հաշվետվությունը:
- Ժամկետների ու ընթացակարգերի խախտմամբ չեն քննարկվել նաև Տնտեսական մրցակցության պաշտպանության և Հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովների 2015թ. տարեկան գործունեության ծրագրերը:
- Խորհրդարանը չի քննարկել նաև գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը. այն, ըստ 2014թ. հունիսին ընդունված որոշման, պետք է ներկայացվեր մինչև 6-րդ նստաշրջանի ավարտը:
- ԱԺ-ն քվեարկությամբ մերժել է ոչ իշխանական խմբակցությունների հեղինակած 7 օրենսդրական նախաձեռնության ընդգրկումը օրակարգ: Երեք նախագիծ օրակարգ է ընդգրկվել արտահերթ կարգով և մերժվել քննարկվելուց հետո:
- Արձանագրվել է նաև կառավարության հեղինակած նախագծերը մերժելու երկու դեպք: Դրանցից մեկը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրինագիծը հարակից 4 նախագծերով, կրկին ներկայացվեց և 3 ընթերցմամբ ընդունվեց արտահերթ նստաշրջանի ընթացքում: Մյուս փաթեթը՝ «Անձնական փոխանցման պաշտպանության մասին» օրինագիծը հարակից 17 նախագծերով, նորից շրջանառության մեջ է դրվել 2014թ. դեկտեմբերի 3-ին:
- 6-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողովը գրանցել է աննախադեպ ցուցանիշ. ստացել է ընդամենը 1 դիմում, հրավիրել ընդամենը 1 նիստ և կայացրել որոշում դիմումը մերժելու մասին:
- Դեկտեմբերի 11-ին հարձակման է ենթարկվել ԱԺ ՀԱԿ խմբակցության քարտուղար Արամ Մանուկյանը: Մերժելով ԲՀԿ, ՀԱԿ, «Ժառանգություն» և ՕԵԿ խմբակցությունների՝ հարցը քննարկելու նպատակով արտահերթ նստաշրջան հրավիրելու առաջարկը՝ խորհրդարանական մեծամասնությունը ՀՅԴ-ի առաջարկով նախաձեռնել է արտահերթ քննարկում և ընդունել բռնությունը դադարապարտող հայտարարություն:

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

■ Հասարակական և քաղաքական գործիչների նկատմամբ կիրառված բռնությունը դափապարտող հայտարարության քննարկման ժամանակ խորհրդարանական ամբիոնից ելույթ է ունեցել ՀՀԿ-ական Սեդրակ Սարոյանը՝ գրանցելով իր առաջին ելույթը պարզամավորական 7-ամյա գործունեության ընթացքում:

Միջուկներ կամ թվերի հեղուկ


Օրենսդրական նախաձեռնություններ



■ Կառավարություն - 90%
■ ԱԺ - 10%

■ Օրինաստեղծ աշխատանքում խորհրդարանի նախաձեռնողականության մակարդակը նախորդ նստաշրջանի համեմատ աճել է: Եթե 5-րդ նստաշրջանի ընթացքում օրենսդրական նախաձեռնությունների ԱԺ-կառավարություն փոկոսային հարաբերակցությունը 5/95 էր, ապա 6-րդ նստաշրջանում՝ 10/90 :

Հանրապետական խմբակցության քվեարկության պատկերը




■ Կողմ - 88.8%
■ Դեմ - 1.6%
■ Չեռնպահ - 0.3%
■ Բացակա - 6.0%
■ Չի քվեարկել - 3.3%

■ 5-րդ գումարման ԱԺ չորրորդ նստաշրջանում խորհրդարանական մեծամասնությունը՝ ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիան, պահպանել է քվեարկությունների տրամաբանությունը. դեմ քվեարկությունները, ինչպես նախորդ նստաշրջանում, չեն հասնում 1 փոկոսի և բացառապես վերաբերում են ընդդիմության նախաձեռնություններին: Սա վկայում է, որ խորհրդարանի քաղաքական մեծամասնության և կառավարության միջև համաձայնությունն ու դիրքորոշումների ներդաշնակությունը շարունակում է պահպանվել:

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

■ Ըստ հարցերի և ելույթների վիճակագրության՝ դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է Հանրապետական խմբակցությունը (202 հարց ու ելույթ), ամենացածրը «Ժառանգության» արդյունքն է (50 հարց ու ելույթ): Սակայն ակտիվության ցուցանիշը խմբակցությունների պարզամավորների քանակի հետ համադրելիս սրապվում է, որ ԱԺ երկու մեծ խմբակցությունների՝ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի պարզամավորներից յուրաքանչյուրը միջին հաշվով հարց փոխել կամ ելույթ ունեցել է 2 անգամ, իսկ փոքրաթիվ խմբակցությունների պարզամավորները՝ մոտ 15 անգամ:

Աժ խմբակցությունների ակտիվությունը



■ Ըստ ParliamentMonitoring.am-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման Ազգային ժողովի ամենաշատ բացակայած պարզամավորը ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանն է: Ամենաշատը կողմ են քվեարկել ՀՀԿ խմբակցության պարզամավորներ Ռազմիկ Զոհրաբյանն ու Հովհաննես Սահակյանը: Ամենաշատ դեմ քվեարկած օրենսդիրը ՀԱԿ-ից Սիկուլ Փաշինյանն է: Հարցերի և ելույթների քանակով ամենաակտիվը ՀՅԴ-ից Արծվիկ Մինասյանն է:

■ Ըստ ParliamentMonitoring.am-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման Ազգային ժողովի 6-րդ նստաշրջանում պահպանվել է նախորդ նստաշրջաններում ձևավորված ավանդույթը. 131 պարզամավորից 67-ը օրենսդրական նախաձեռնությունների քննարկման ժամանակ ոչ մի հարց չի փոխել և ոչ մի ելույթ չի ունեցել: ՀՀԿ և ԲՀԿ խմբակցություններում «լուռ» պարզամավորները կեսից ավելին են. ՀՀԿ-ում՝ 70-ից 40-ը, ԲՀԿ-ում 36-ից 26-ը:

ԱԺ ԽԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնողականություն, ակտիվություն


Ազգային ժողովի 5-րդ գումարման 6-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված 132 օրենքներից 13-ի հեղինակը ԱԺ պարզամավորներն են, 119-ինը՝ ՀՀ կառավարությունը: Պարզամավորների նախաձեռնությամբ ընդունված բոլոր օրենքներում խորհրդարանական մեծամասնության՝ ՀՀԿ-ի ներկայացուցիչները կամ հեղինակներ են, կամ համահեղինակներ:

Ընդդիմադիր խմբակցությունների հեղինակած որևէ օրենսդրական նախաձեռնություն ամբողջությամբ չի ընդունվել («Ժառանգություն» խմբակցության պարզամավոր Զարուհի Փոստանյանի՝ «ԱԺ կանոնակարգ օրենքում» փոփոխություններ առաջարկող օրինագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ): ԲՀԿ խմբակցության պարզամավորների հեղինակած օրենքներից ընդունվել են 2-ը, որոնց համահեղինակ են նաև ՀՀԿ-ական պարզամավորները:

ԱԺ-ն քվեարկությամբ մերժել է ոչ իշխանական խմբակցությունների հեղինակած 7 օրենսդրական նախաձեռնության ընդգրկումը օրակարգ: 3 նախագիծ օրակարգ է ընդգրկվել արտահերթ կարգով և մերժվել քննարկվելուց հետո: Քննարկված և մերժված նախագծերից մեկը ՀԱԿ-ի հեղինակած օրինագիծն էր «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», մյուս երկուսը որոշման նախագծեր էին («Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը բարեփոխելու մասին», հեղինակ՝ ոչ իշխանական 4 խմբակցություններ և «Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման ռազմաքաղաքական հիմնադրույթների հայեցակետերի մասին», հեղինակ՝ «Ժառանգություն» խմբակցություն):

«Հանրապետական» խմբակցություն: Նստաշրջանի ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 18 օրենսդրական նախաձեռնություն: Ամբողջությամբ ընդունվել է դրանցից 6-ը: 6-ից միայն 2-ն են բոլոր ընթերցումներն անցել 6-րդ նստաշրջանի ընթացքում, մյուսները գալիս են նախորդ նստաշրջանից: Այս օրինագծերից 2-ի համահեղինակ է նաև ԲՀԿ-ն: Նստաշրջանին հաջորդած արտահերթի ընթացքում (հրավիրված ՀՀԿ-ի և ՀՅԴ-ի նախաձեռնությամբ), ընդունվել է հայտարարության նախագիծ, որի հեղինակը ՀՀԿ և ՀՅԴ խմբակցությունների ղեկավարներն են:

ԱԺ ԽԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՀԿ-ն ունի 5 օրենքի նախագիծ, որոնք շրջանառության մեջ են դրվել 2014 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, և որոնց ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է: Դեռևս նստաշրջանի օրակարգ չընդգրկված ևս 2 նախագիծ շրջանառության մեջ է:

Նստաշրջանի օրակարգում է ՀՀԿ պարզամավորների հեղինակած 33 նախագիծ, որոնցից միայն 7-ն են օրակարգ ընդգրկվել 2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: 5 նախագիծ ՀՀԿ-ն հեղինակել է այլ խմբակցությունների հետ միասին: Օրակարգ ընդգրկվածներից 2-ն անցել են առաջին ընթերցում:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՀԿ խմբակցության ամենաշատ բացակայած պարզամավորը Հերմինե Նաղդալյանն է (46), իսկ խմբակցության 60 պարզամավոր չի բացակայել ընդհանրապես: Ամենաշատ հարց տված և ելույթ ունեցած պարզամավորը Խոսրով Հարությունյանն է (25 հարց, 18 ելույթ): ՀՀԿ-ի 70 պարզամավորից հարց տվել է միայն 23-ը, ելույթ է ունեցել 21-ը: ՀՀԿ-ի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորը Հակոբ Հակոբյանն է (103), ամենաշատը (2) դեմ է քվեարկել 5 պարզամավոր: Խմբակցության ամենաշատ կողմ (102) քվեարկած պարզամավորների թիվն անցնում է 3 փասնյակը: Ամենաշատ չքվեարկածը (11) Մանվել Բաղեյանն է:

Ողջ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների փասնյակը կազմված է բացառապես ՀՀԿ-ականներից: Փոխարենը ոչ մի ՀՀԿ-ական չկա ամենաշատ դեմ և ձեռնպահ քվեարկածների փասնյակներում: Ամենաշատ բացակայածների փասնյակում միակ ՀՀԿ-ականը Կարեն Կարապետյանն է, ամենաակտիվների փասնյակի միակ ՀՀԿ-ականը՝ Խոսրով Հարությունյանը:

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն: Նստաշրջանի ընթացքում ամբողջությամբ ընդունվել է ԲՀԿ-ի հեղինակած 2 նախագիծ: Դրանք երկուսն էլ օրակարգ են ընդգրկվել նախորդ՝ 5-րդ նստաշրջանում: 2 նախագծերն էլ ԲՀԿ-ն հեղինակել է ՀՀԿ-ի հետ միասին:



Գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունը չստացած ԲՀԿ-ի 3 նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ Ազգային ժողովը մերժել է քվեարկությամբ (1-ը ԲՀԿ-ն հեղինակել էր ոչ իշխանական մյուս ուժերի հետ միասին): 2014թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մինչև 1 փարով հետաձգվել է ԲՀԿ-ի կողմից շրջանառության մեջ դրված 8 օրենքի նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ: Դրանցից միայն 3-ն է խմբակցությունը հեղինակել 6-րդ նստաշրջանի ընթացքում:

Նստաշրջանի օրակարգում է ԲՀԿ պարզամավորների հեղինակած 6 նախագիծ: Դրանցից միայն 1-ն է խմբակցությունը (ՀԱԿ-ի հետ միասին) գրել 6-րդ նստաշրջանում: Այն հայտարարության նախագիծ է կառավարման ձգնաժամի մասին:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում


ԲՀԿ-ի ամենաշատ հարց տված (11) և ելույթ ունեցած (14) պարզամավորը Միքայել Մելքումյանն է: Նա նաև ամենաշատ կողմ քվեարկած (32) ԲՀԿ-ականն է: Ամենաշատ դեմ է քվեարկել Վարդան Օսկանյանը (6): Ամենաշատ ձեռնպահ քվեարկածը Էլինար Վարդանյանն է (15):

Խմբակցության ամենաշատ բացակայած պարզամավորը Գագիկ Ծառուկյանն է (55):

Նա գլխավորում է նաև ողջ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ բացակայած պարզամավորների փասնյակը: Այս փասնյակում 5-ը ԲՀԿ-ից են: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածների փասնյակում ԲՀԿ-ական են 4-ը: Ամենաակտիվների փասնյակի միակ ԲՀԿ-ականը Միքայել Մելքումյանն է:

ԱԺ ԽԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայ ազգային կոնգրես» խմբակցություն: Նստաշրջանի ընթացքում ՀԱԿ-ը հեղինակել է 6 օրենսդրական նախաձեռնություն և 2 հայտարարության նախագիծ: Գլխադասային հանձնաժողովները դրանցից ոչ մեկին դրական եզրակացություններ չեն տվել: Նախագծերից 1-ը՝ «Արտակարգ դրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, խմբակցության նախաձեռնությամբ արտահերթ կարգով քննարկվել է լիազումար նիստում և մերժվել: Մեկի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ ԱԺ-ն մերժել է քվեարկությամբ (նախագիծը հեղինակել էին ՀԱԿ, ԲՀԿ, ՀՅԴ, «Ժառանգություն» խմբակցությունները, վերաբերում էր շրջանառության հարկին): Չորս նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև մեկ տարի ժամկետով:



Նստաշրջանի օրակարգում է 2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀԱԿ-ի հեղինակած ընդամենը 2 նախագիծ. մեկը՝ ՀՀԿ-ՀՅԴ-ՕԵԿ-ի համահեղինակությամբ (առաջարկվում է փոփոխություններ կատարել «Բյուջետային համակարգի մասին» օրենքում), մյուսը ներկայացվել է ԲՀԿ-ի համահեղինակությամբ (հայտարարության նախագիծ կառավարման ձգնաժամի մասին):


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում

ՀԱԿ խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորը Սյրեփան Դեմիրճյանն է (28), ամենաշատը դեմ քվեարկել է Նիկոլ Փաշինյանը (29): Ամենաշատ բացակայածը Հրանտ Բագրատյանն է (57): Ամենաշատ հարց տված (10) պարզամավորը Արամ Մանուկյանն է, ելույթ ունեցածը (8)՝ Գագիկ Զհանգիրյանը: Նա նաև ՀԱԿ-ի ամենաշատ ձեռնպահ քվեարկած պարզամավորն է (16):

Գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ և ձեռնպահ քվեարկածների տասնյակներում ՀԱԿ ոչ մի պարզամավոր ընդգրկված չէ: Ամենաշատ բացակայածների տասնյակում Հրանտ Բագրատյանն ու Սյրեփան Դեմիրճյանն են: Դեմ քվեարկածների տասնյակի ուղիղ կեսը ՀԱԿ-ից են, իսկ տասնյակը գլխավորում է Նիկոլ Փաշինյանը: Ամենաակտիվների տասնյակում նա ՀԱԿ-ականները 5-ն են:

ԱԺ ԽԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժառանգություն» խմբակցություն: Նստաշրջանի ընթացքում առաջին ընթերցմամբ ընդունվել է «Ժառանգություն» խմբակցության հեղինակած 1 օրենքի նախագիծ, որով փոփոխություն էր առաջարկվում ԱԺ կանոնակարգ օրենքում: Արտահերթ կարգով քննարկվել և մերժվել է խմբակցության 3 նախագիծ, 1-ը՝ գրված խորհրդարանական այլ ուժերի հետ միասին:



Խմբակցության 9 նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 տարի ժամկետով (1-ը՝ այլ ուժերի հետ համահեղինակությամբ): «Ժառանգություն» ունի շրջանառության մեջ դրված, բայց դեռ օրակարգ չընդգրկված 3 նախագիծ:

Նստաշրջանի օրակարգում է «Ժառանգության» 9 օրենքի նախագիծ, որոնցից միայն 3-ն են խմբակցության պարզամավորները հեղինակել 6-րդ նստաշրջանի ընթացքում:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում

«Ժառանգություն» խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորը Ալեքսանդր Արզումանյանն է (26): Ամենաշատը դեմ է քվեարկել Թևան Պողոսյանը (23), ձեռնպահ՝ Զարուհի Փոստանյանը (11): Ամենաշատ բացակայածը Ռուբեն Հակոբյանն է (27), ընդհանրապես չի բացակայել Թևան Պողոսյանը: Նա նաև ամենաշատ հարց տված (19) և ելույթ ունեցած (13) պարզամավորն է:

Ողջ գումարման ընթացքում խորհրդարանի ամենակրիվ պարզամավորների փասնյակում «Ժառանգությունից» միայն Թևան Պողոսյանն է, ամենաշատ բացակայածների փասնյակում Զարուհի Փոստանյանը, ամենաշատ կողմ քվեարկածների փասնյակում չկա «Ժառանգության» ոչ մի անդամ: Ձեռնպահ քվեարկածների փասնյակում «Ժառանգությունից» միայն Ալեքսանդր Արզումանյանն է: Ամենաշատ դեմ քվեարկածների փասնյակում են խմբակցության 4 անդամ:

ԱԺ ԽԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն (քվ. գրաֆիկ):
6-րդ նստաշրջանի ընթացքում ՀՅԴ-ն հեղինակել է 2 օրենքի, 2 որոշման և մեկ հայտարարության նախագիծ: Ընդունվել է միայն հայտարարության նախագիծը:



Ազգային ժողովը քվեարկությամբ մերժել է նստաշրջանի օրակարգ ընդգրկել ՀՅԴ-ի 1 նախագիծ՝ ներկայացված ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի և «Ժառանգության» հետ միասին: Դրանով փոփոխություններ էին առաջարկվում «Շրջանառության հարկի մասին» օրենքում: Մեկ նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարով: «Նաիրիփ» ՓԲԸ-ի գործունեության խնդիրներն ուսումնասիրելու համար ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին ՀՅԴ որոշման նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարով: Դրան միացել են ԲՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ, «Ժառանգություն» խմբակցությունները:

Աժ օրակարգում կա ՀՅԴ-ի, ՀՀԿ-ի, ՕԵԿ-ի ու ՀԱԿ-ի կողմից 6-րդ նստաշրջանում հեղինակված 1 օրինագիծ՝ բյուջերային համակարգի վերաբերյալ: Նախորդ նստաշրջաններից փոխանցված ևս 2 օրենքի նախագիծ ընդգրկվել է նիստերի օրակարգ: Դրանցից 1-ը ՀՅԴ-ն հեղինակել է ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի և ՕԵԿ-ի հետ միասին:

6-րդ նստաշրջանի ավարտից հետո ՀՅԴ խմբակցությունը ՀՀԿ-ի հետ միասին նախաձեռնել է արտահերթ նստաշրջան, որի ընթացքում ընդունվել է ՀՅԴ-ի և ՀՀԿ-ի հեղինակած հայտարարության նախագիծը՝ քաղաքական, հասարակական գործիչների նկատմամբ բռնությունները դադարեցնելու վերաբերյալ:


Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՅԴ-ի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորը Արծվիկ Մինասյանն է (29), ամենաշատ դեմ (6) և ձեռնպահ (28) քվեարկածը դարձյալ Արծվիկ Մինասյանն է: Նա նաև խմբակցության ամենաշատ հարց փակած (31) և ելույթ ունեցած (23) պարզամավորն է: Ամենաշատը բացակայել է Արմեն Բաբայանը (55):

ԱԺ ԽԱՐԱԿԻՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ողջ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկածների փասնյակում ոչ մի ՀՅԴ-ական ընդգրկված չէ, դեմ քվեարկածների փասնյակում միակ ՀՅԴ-ականը Արծվիկ Մինասյանն է: Նա միակ ՀՅԴ-ականն է նաև ամենաակտիվների փասնյակում և գլխավորում է այն: Ամենաշատ բացակայածների փասնյակում ՀՅԴ-ից Արմեն Բաբայանն է: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածների փասնյակում խմբակցությունից 4-ն են:

«Օրինաց երկիր կուսակցություն»: Նստաշրջանի ընթացքում առաջին ընթերցմամբ ընդունվել է ՕԵԿ-ի միայն 1 նախագիծ: Այն խմբակցությունը հեղինակել է ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի հետ միասին: Գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն չստացած 1 նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ ԱԺ-ն մերժել է քվեարկությամբ:



Մեկ նախագիծ՝ հեղինակված ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի և ՀՅԴ-ի հետ միասին, ընդգրկվել է քառօրյա նիստերի օրակարգ: Երկու նախագծի ընդգրկումը քառօրյա օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարով: Մինչև 1 փարով հետաձգվել է 15 նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ: Դրանցից 1-ը ՕԵԿ-ը ներկայացրել է ՀՀԿ, ՀՅԴ, ՀԱԿ, «Ժառանգություն» խմբակցությունների հետ միասին: ՕԵԿ-ն ունի 2014թ. նոյեմբերին շրջանառության մեջ դրված 1 օրենքի նախագիծ, որը դեռևս չի ընդգրկվել նստաշրջանի օրակարգ:

Նստաշրջանի ընթացքում քննարկվել է կառավարությանն ուղղված ՕԵԿ 1 հարցապնդում ավանդների փոխհարուցման գործընթացի վերաբերյալ, չի կայացել խմբակցության նախաձեռնած 1 արտահերթ նիստ («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը փոփոխելու նպատակով):

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ նստաշրջանի ընթացքում

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԵԿ խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պատգամավորը Լևոն Դոխոյանն է (24): Նա նաև ամենաշատ ձեռնպահ քվեարկածն է (19): Ամենաշատը դեմ քվեարկել է Հեղինե Բիշարյանը (5), ամենածափը բացակայել է Միեր Շահգեղյանը (26): Նա և Հեղինե Բիշարյանը խմբակցության ամենաշատ հարց տված (15) պատգամավորներն են: ՕԵԿ ամենաշատ ելույթ (8) ունեցածները 3-ն են՝ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան, Միեր Շահգեղյան:

Գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ, դեմ, ձեռնպահ քվեարկածների ու բացակայածների տասնյակներում ոչ մի ՕԵԿ-ական չկա: Ամենաակտիվ պատգամավորների տասնյակում միակ ՕԵԿ-ական պատգամավորը Հովհաննես Մարգարյանն է:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք: Ազգային ժողովը 6-րդ նստաշրջանի ընթացքում լսել է 1 հաղորդում և 1 զեկույց. քննարկվել են Հանրային հեռուստառադիոընկերության 2013թ. գործունեության վերաբերյալ ՀՀՌԽ հաղորդումն ու 2013թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին փարեկան զեկույցը: Խորհրդարանը քննարկել, բայց չի քվեարկել Վերահսկիչ պալատի 2015 թվականի փարեկան գործունեության ծրագիրը: Եվս 2 կառույցի (Տնտեսական մրցակցության պաշտպանության և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովներ) փարեկան գործունեության ծրագիր, 1 հաշվետվություն և 1 հաղորդում ընդգրկվել են 6-րդ նստաշրջանի օրակարգ, բայց չեն քննարկվել:

Վերահսկողությունը պառլամենտի կարևորագույն գործառնություններից է՝ սահմանված երկրի բարձրագույն օրենքով: Սահմանադրությամբ խորհրդարանին վերապահված իրավասությունները բխում են իշխանությունների փարանջափման ու հակակշռման հիմնարար սկզբունքից, ինչը ենթադրում է նաև խորհրդարանի լրջագույն պարասխանավորություն այդ գործառնության իրականացնելիս: Գործադիր ու դարական իշխանության գործունեության համար համապարասխան իրավական միջավայր ստեղծելու իրավասությունից բացի՝ օրենսդիր մարմինն իր վերահսկողական գործառնության իրականացնելու մի շարք գործիքներ ունի. հաստատում է ծրագրեր ու հաշվետվություններ, վավերացնում է միջազգային կոնվենցիաներ, միջպետական պայմանագրեր ու համաձայնագրեր, նշանակում բարձրաստիճան պաշտոնյաների: Այսինքն՝ սահմանադրորեն խորհրդարանն օժտված է պետության համար բոլոր կարևոր հարցերում իր վերաբերմունքն ունենալու և արտահայտելու իրավասությամբ: Այլ հարց է, թե այդ իրավասությունից օգտվելու ինչպիսի ավանդույթներ են ձևավորված:

Կարևոր է նաև, թե ինչպիսի իրավական մեխանիզմներ են ստեղծված խորհրդարանի վերահսկողական գործառնության արդյունավետ իրականացման համար: Առայժմ Ազգային ժողովի վերահսկողությունն ունի առավելապես ֆորմալ բնույթ, քանի որ մեծ մասամբ հաշվետվություն-հաղորդումների ներկայացման ընթացակարգերը խորհրդարանի համար նախատեսում են սոսկ «ի գիտություն ընդունելու» իրավասություն:

Մյուս՝ առավել սակավ դեպքերում, երբ Ազգային ժողովն օժտված է վերահսկողական լուրջ լծակներով (կառավարության ծրագրի, բյուջեի կափարողականի հաստատում), խորհրդարանի քաղաքական մեծամասնությունն իր վարքագծով է չեզոքացնում այդ հնարավորությունը՝ մշտապես վստահություն դրսևորելով գործադիրի հանդեպ:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՃԳՆԱԺԱՍԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

6-րդ նստաշրջանն առանձնապես ԱԺ վերահսկողական գործառույթի ֆորմալացման և արժեզրկման աննախադեպ դրսևորումներով: Նոր որակ ստացավ պետական փարբեր մարմինների գործունեության հաշվետվությունների և ծրագրերի քննարկման ժամկետները խախտելու երևույթը: Գրանցվեցին փարբեր դեպքեր:

■ Խախտելով ընթացակարգերը՝ խորհրդարանը չքննարկեց Վերահսկիչ պալատի 2013թ. փարբեկան հաշվետվությունը և չքվեարկեց կառույցի 2015թ. գործունեության ծրագիրը:

Համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի 101-րդ հոդվածի՝ Վերահսկիչ պալատի փարբեկան հաշվետվությունը խորհրդարանի քննարկմանն է ներկայացվում բյուջեփային փարվա ավարտից հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում և քննարկվում է մինչև փայլ հերթական նստաշրջանի ավարտը: Պարզամավորներն այն քննարկում են՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:

Այսինքն, հաշվետվությունը ԱԺ-ն պետք է քննարկեր և ի գիտություն ընդուներ դեռևս 5-րդ նստաշրջանի ընթացքում: Խորհրդարանը, սակայն, փաստաթուղթը քննարկելու ժամանակ չգտավ ոչ 5-րդ և ոչ էլ 6-րդ նստաշրջանի ընթացքում: Մինչդեռ հաշվետվության քննարկումը բխում է ոչ միայն բյուջեփային միջոցների օգտագործման արդյունավետության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման սկզբունքից, այլ նաև հաշվետվության մեջ արձանագրված թերությունների, ներկայացված խախտումների համար կառավարությանը խորհրդարանի առջև հաշվետու դարձնելու անհրաժեշտությունից: 6-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվեց 2015թ. պետական բյուջեն, և ՎՊ նախորդ փարվա վերահսկողական գործունեության հաշվետվության՝ թեկուզ ուշացումով քննարկումը կարող էր բյուջեի նկատմամբ խորհրդարանի դիրքորոշման համար ուղղորդիչ կամ օժանդակող նշանակություն ունենալ:

■ Եթե ՎՊ գործունեության հաշվետվության քննարկումը իրավական որևէ հետևանք չունի, քանի որ դրա վերաբերյալ խորհրդարանը որևէ որոշում չի ընդունում, ապա փարբեկան ծրագիրը, ըստ ՀՀ Սահմանադրության 83.4 հոդվածի, ենթակա է ԱԺ հաստատման:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի 100-րդ հոդվածի՝ Վերահսկիչ պալատի գործունեության փարեկան ծրագրի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում բյուջեփայլին փարին սկսվելուց առնվազն 60 օր առաջ, իսկ փաստաթղթի քննարկումն սկսվում է ոչ ուշ, քան բյուջեփայլին փարվան նախորդող փարվա դեկտեմբեր ամսվա առաջին չորսօրյա նիստում:

ԱԺ-ն սահմանված ժամկետում չի ապահովել ծրագրի ընդունումը: Ընդ որում՝ դա չի արվել նույնիսկ մինչև փարեվերջ երեք անգամ ԱԺ արտահերթ նստաշրջան հրավիրելու պարագայում: Հետևաբար, մի կողմից՝ խորհրդարանը խախտել է ԱԺ կանոնակարգ օրենքն ու ՀՀ սահմանադրությունը, մյուս կողմից՝ խնդրահարույց դարձրել ՎՊ 2015թ. գործունեության իրավական հիմքերը. դժվար է մեկնաբանել, թե՞ առանց հաստատված ծրագրի որքանով է Վերահսկիչ պալատն իրավասու բյուջեփայլին միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողություն իրականացնել: Դժվար է նաև պնդել՝ արդյոք նման վերաբերմունքը պայմանավորված է սոսկ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի ծանրաբեռնվածությամբ, թե՞ քաղաքական ինքնափայ դիրքորոշում է ՎՊ-ի նկատմամբ: Իրավիճակը փաստում է սեփական վերահսկողական լիազորություններն իրացնելու հարցում խորհրդարանի անհետևողականությունն ու անփութությունը:

■ ԱԺ-ին չհաջողվեց նստաշրջանի ընթացքում կատարել Կենտրոնական բանկի 2015թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը շրջանառության մեջ դնելու գործառույթը: «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ԿԲ-ն փաստաթուղթը ԱԺ է ուղարկում յուրաքանչյուր փարի պետական բյուջեի ընդունումից հետո 10 օրվա ընթացքում: 2015թ. ՀՀ պետական բյուջեն ընդունվել է դեկտեմբերի 4-ին, հետևաբար՝ ԿԲ-ն հաջորդ փարվա ծրագիրը ԱԺ պետք է ներկայացներ մինչև դեկտեմբերի 14-ը: Սակայն ԱԺ պաշտոնական կայքում մինչև դեկտեմբերի 30-ը որևէ տեղեկատվություն չկար այն մասին, թե արդյոք Կենտրոնական բանկը կատարե՞լ է օրենսդրության սույն պահանջը: Մինչդեռ հարցի քննարկումն առավել քան հրատապ էր՝ նկատի ունենալով դեկտեմբերին Հայաստանի ֆինանսական շուկայում ստեղծված ճգնաժամային իրավիճակը: Խորհրդարանը հարցի վերաբերյալ դեկտեմբերի 17-ին արտահերթ նիստ հրավիրեց, բայց քննարկումը կազմակերպվեց դռնփակ ռեժիմով, և ԿԲ նախագահը պարզաբանումներ փակեց ստեղծված իրավիճակի ու հնարավոր ելքերի մասին՝ առանց անդրադառնալու հաջորդ փարվա դրամավարկային քաղաքականության ծրագրին:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

■ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2015թ. տարեկան գործունեության ծրագիրը, որը ևս խորհրդարանն ընդունում է ի գիտություն, նստաշրջանի ընթացքում այդպես էլ չքննարկվեց՝ չնայած հոկտեմբերից ընդգրկված էր քառօրյա նիստերի օրակարգում: Մինչդեռ հատկապես տարեվերջին արձանագրված գնաձի երևույթները, կառավարության և Կենտրոնական բանկի կողմից գների ու արտարժույթի շուկայի վայրիվերումներում սպեկուլյատիվ գործոնի ազդեցության մասին պնդումները խորհրդարանում ՏՄՊՊՀ-ի գործունեության ծրագրի քննարկումը դարձնում էին պահանջված:

■ Խորհրդարանը չի կատարել նաև «ՀՀ-ում գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ԱԺ Ժամանակավոր հանձնաժողովի ստեղծելու մասին» 2013թ. փետրվարին ընդունված որոշման պահանջը: Հանձնաժողովը ստեղծվել էր հայ-ռուսական «գազային» համաձայնագրերի վավերացման հետքերով և նպատակ ուներ ուսումնասիրել ու եզրակացություններ կայացնել ՌԴ-ից ՀՀ ներմուծվող գազի դիմաց կուտակված պարտքի ձևավորման օրինականության և չափի հիմնավորվածության, «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ՀՀ բաժնեմասի գնահատման, բնական գազի այլընտրանքային ներկրման, Հայաստանի տարածքով տարանցման հնարավորությունների և այլնի վերաբերյալ: Հանձնաժողովը պետք է գործունեության արդյունքների վերաբերյալ խորհրդարանին եզրակացություններ կայացնե՛ր մինչև ԱԺ 5-րդ նստաշրջանի ավարտը: Սակայն հունիսին՝ միջանկյալ եզրակացության քննարկման ժամանակ, որոշվեց հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել մինչև ԱԺ 6-րդ նստաշրջանի ավարտը՝ լրացուցիչ մասնագիտական ուսումնասիրություններ կատարելու և վերջնական եզրակացությունն ավելի փաստարկված ու արժանահավատ դարձնելու նկատառումով: 6-րդ նստաշրջանն ավարտվեց, սակայն եզրակացությունն այդպես էլ չներկայացվեց ԱԺ-ի քննարկմանը:

Իրավիճակը փաստում է խորհրդարանական փոքրամասնության ճնշման ներքո ստեղծված հանձնաժողովի գոյությունն իմաստազրկելու և ձևականացնելու միտումը: Սրացվում է, որ նախաձեռնության նպատակը ոչ այնքան գազամատակարարման ոլորտի խնդիրները բացահայտելն էր, որքան անհրաժեշտ ձևաչափը ստեղծելու միջոցով հասարակական-քաղաքական կրթերը չեզոքացնելը:

ԵԱՏՄ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

5-րդ գումարման Ազգային ժողովը 6-րդ նստաշրջանի ընթացքում ավարտին հասցրեց Հայաստանի համար քաղաքական և տնտեսական նշանակությամբ շրջադարձային գործընթացը. խորհրդարանը վավերացրեց Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունն ամրագրող պայմանագիրը: Ազգային ժողովը գործընթացի մեջ ներգրավվեց եզրափակիչ փուլում նոր միությանը անդամագրվելու մտադրության մասին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

հայրարարությունից մոտ մեկ տարի անց և պայմանագրի ուժի մեջ մտնելուց մեկ ամիս առաջ: Ստորև քննարկվում են օրենսդիր մարմնի մասնակցության արդյունավետության, հնարավոր ազդեցություն իրավական հնարավորությունները, խորհրդարանական քննարկման առանձնահատկությունները: Դիտարկվել է նաև, թե խորհրդարանական ուժերի՝ եվրասիական կողմնորոշումը որքանով է արտացոլում նրանց ծրագրային մոտեցումները:

Տեղեկանք: 5-րդ գումարման Ազգային ժողովը 2014թ. դեկտեմբերի 4-ին ձայների 103 «կողմ», 7 «դեմ» և 1 «ձեռնպահ» հարաբերակցությամբ վավերացրեց «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» հոկտեմբերի 10-ին՝ Մինսկում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ստորագրված պայմանագիրը: Դեմ քվեարկեցին «Ժառանգություն» խմբակցության անդամները, ՀԱԿ խմբակցության պատգամավոր Նիկոլ Փաշինյանը, անկախ պատգամավորներ Էդմոն Մարուքյանն ու Խաչատուր Քոքոբեյանը: Միակ «ձեռնպահ»-ը ՀՅԴ խմբակցության քարտուղար Աղվան Վարդանյանն էր: ԱԺ 6 խմբակցություններից 5-ը՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՕԵԿ-ը և ՀՅԴ-ն, «կողմ» քվեարկեցին պայմանագրին:

Պայմանագիրը բաղկացած է բուն պայմանագրից եւ 5 հավելվածից: Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը միանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին, ինչպես նաև՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված ու եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի: Այն առանց մաքսային տուրքերի և փաստաթղթաշրջանառության ապրանքաշրջանառություն է նախատեսում Հայաստանի և ԵԱՏՄ-ին անդամակցող երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի միջև, իսկ միությունից դուրս երկրներից ապրանքների ներկրման համար սահմանում միասնական մաքսային ռեժիմներ:

Խորհրդարանի մասնակցությունը ԵԱՏՄ անդամակցության որոշմանը. մեկուսացվածություն, թե՞ ֆորմալ ներկայություն

Ազգային ժողովը «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագիրը հավելվածներով, քննարկման առարկա դարձրեց 2014թ. դեկտեմբերի 1-ին՝ ԱԺ աշնանային նստաշրջանի վերջին քառօրյայի ընթացքում և ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի ուժի մեջ մտնելուց բառացիորեն մեկ ամիս առաջ:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մինչայդ՝ նոյեմբերի 24-ին, ԱԺ Կոնստիտուցիոնալ հարցերի և արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովները թեմայի շուրջ կազմակերպեցին խորհրդարանական համատեղ լսումներ: Ըստ էության՝ խորհրդարանի ներգրավվածությունը ԵԱՏՄ անդամակցության որոշման կայացմանը սահմանափակվեց այսպանով:

Խորհրդարանի կողմից միջազգային պայմանագրերի վավերացումը՝ որպես քաղաքական և ներկայացուցչական մարմնի մասնակցությունն ապահովելու և նրան վերապահված պատասխանատվությունն իրացնելու մեխանիզմ, սահմանված է ՀՀ սահմանադրությամբ: Զուտ իրավական ընթացակարգերի պահպանման տեսանկյունից ԱԺ-ն կարարել է իրեն վերապահված գործառույթը: Պետության համար բախտորոշ այս որոշման կայացմանը, սակայն, խորհրդարանը միացել է՝ առանց դրա ընդունման կամ նախագծման վրա ազդելու հնարավորության և սահմանափակվել է վավերացման սահմանադրական գործառույթը կարարելու իրավական ընթացակարգով:

Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը: Խորհրդարանի վավերացմանը ենթակա են այն միջազգային պայմանագրերը, որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն, վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին, ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Հայաստանի Հանրապետության համար, որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր:

ՀՀ սահմանադրություն, հոդված 81

Միջազգային պայմանագիրն Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացվում, եթե դա կամ դրանում ամրագրված պարտավորությունները սահմանադրական դատարանի որոշմամբ չեն հակասում Սահմանադրությանը:

ԱԺ կանոնակարգ, հոդված 93

Մայր օրենքը, փաստորեն, խորհրդարանին թույլ չի տալիս միջազգային պայմանագրերը կասեցնել կամ չեղյալ հայտարարել առանց նախագահի առաջարկության, այսինքն՝ սեփական նախաձեռնությամբ:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդարանին չի փոխվում նաև վերապահումներ կատարելու գործառույթ, մինչդեռ ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանվում է, որ միջազգային պայմանագրերը կարող են վավերացման ներկայացվել նաև հիմնական զեկույողի կողմից սահմանված վերապահումներով: Խորհրդարանին գործնականում մնում է քաղաքական դիրքորոշում հայտնել վավերացման ներկայացված պայմանագրերի վերջնական փեքսփերի նկատմամբ՝ դրանք ընդունելով կամ մերժելով:

Մյուս կողմից՝ ՀՀ սահմանադրությամբ միջազգային կազմակերպությանը միանալու որոշումը բացառապես պետության ղեկավարի հայեցողության շրջանակում է, քանի որ նախագահին է վերապահված արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարման իրականացումը: Սահմանադրությամբ նախատեսված չէ միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը հանրաքվեի միջոցով որոշելու ինստիտուտի և ընթացակարգ: Այս գաղափարը նոր միայն քննարկվում է և առկա է սահմանադրական փոփոխությունների հրապարակված հայեցակարգում: Ըստ հայեցակարգային սկզբունքների՝ նպատակահարմար է համարվում հանրաքվեի դնել այն միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը, որոնք հանգեցնում են երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումների (Ըստ մայիսի 29-ին Մինսկում ստորագրված և 2015թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտնող «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 1-ին հավելվածի՝ ԵԱՏՄ հանձնաժողովի կողմից կայացվող որոշումները պարտադիր են անդամ պետությունների համար և դրանց փարածքում ենթակա են անմիջական կիրառման):

Բայց մինչ հիմնական օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը, նման բեկումնային նշանակություն ունեցող հարցերի վրա ուղղակիորեն ազդելու իրավական լծակներ հանրությունը չունի՝ բացառությամբ այն դեպքի, երբ ՀՀ նախագահը, հիմնվելով «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վրա, դա համարում է «պետական կյանքին առնչվող կարեւորագույն հարց» և նախընտրում դրա հետ կապված վերջնական որոշման կայացումը թողնել հանրաքվեին: Նման նախադեպ, սակայն, Հայաստանում դեռևս չի գրանցվել:

Այս պայմաններում խորհրդարանի՝ որպես ուղղակի ընտրություններով ձևավորված ներկայացուցչական մարմնի քաղաքական լիարժեք ներգրավումը կարող է դառնալ բացը լրացնելու միջոց: Առավել ևս, երբ հարցն առնչվում է մեկ այլ ձևաչափում՝ ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի ստեղծելու մասին արդեն մշակված, բանակցված պայմանագրի ստորագրումն անհնարին դարձնելու, դրանով իսկ վստահելի գործընկերոջ համարումը վրանգելու գնով կայացվող որոշմանը: Ինչ վերաբերում է գործադիր իշխանության կողմից գործընթացից պառլամենտին մեկուսացնելու դրսևորմանը, ապա այն արտահայտվել է ընդհուպ մինչև 2014թ. սեպտեմբեր ամիսը ԵԱՏՄ-ին անդամակցելու մասին պայմանագիրը չհրապարակելու,

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ըստ ելության գաղտնի պահելու միջոցով՝ պարճառաբանությամբ, թե դա բխում է կողմերի միջև առկա պայմանավորվածությունից: Այդ ընթացքում, անգամ մեծագույն ցանկության դեպքում, ԱԺ պարզամավորները չէին կարող ուսումնասիրել ծավալուն փաստաթուղթն իր հավելվածներով, դրանց շուրջ նախաձեռնել քննարկումներ, հանդես գալ հայտարարությամբ և այլն:

Մյուս կողմից էլ՝ խորհրդարանն ունի կանոնակարգ օրենքով նախատեսված քաղաքական ազդեցության կիրառման այլ գործիքներ, որոնցից ամենաարդյունավետը, թերևս, հայտարարություններով, ուղերձներով հանդես գալն է, ինչպես նաև խորհրդարանական լսումների ինստիտուտի լիարժեք գործարկումը: ԱԺ խմբակցությունները չեն օգտվել ԵԱՏՄ անդամակցության վերաբերյալ հայտարարության կամ ուղերձի նախագծեր ներկայացնելու իրավունքից, իսկ լսումներ ԱԺ-ն կազմակերպել է վավերացման նախօրեին՝ չնայած ՀՀ ԱԳՆ-ի կողմից հրապարակվելուց հետո, ավելի քան երկու ամիս, պայմանագրի փաթեթը եղել է խորհրդարանականների համար հասանելի: Լսումների ինստիտուտը կիրառվել է անարդյունավետ: Այդ ձևաչափով ծավալված քննարկումներն ընդհանուր առմամբ ուղղված էին ոչ թե կարևոր այդ որոշման կայացման նպատակահարմարության, դրդապատճառների, հնարավոր ռիսկերի կամ առավելությունների հարցը դիտարկելուն, այլ պայմանագրի վավերացման անխուսափելիությունը և անբեկանելիությունն արձանագրելուն:

Խորհրդարանական քննարկման առանձնահատկությունները

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի քննարկումն ավելի շատ քաղաքական էր, քան մասնագիտական: Սա պայմանավորված էր պայմանագրի քաղաքական նշանակությամբ և ԱԺ-ում ընդգրկված ուժերի՝ ի սկզբանե որոշարկված քաղաքական ընտրանքով, որն արտացոլվեց նաև պայմանագրի քվեարկության ժամանակ: Պայմանագրի վավերացման խորհրդարանական քննարկումն ի հայտ բերեց որոշ հեղափոխիչ օրինաչափություններ:

■ Միջազգային պայմանագրին ուղեկցող տեղեկանքները որևէ որոշակիություն չէին պարունակում պայմանագրի ուժի մեջ մտնելուց և ԵԱՏՄ անդամակցելուց հետո տնտեսական ցուցանիշների, դրանց փոփոխությունների վերաբերյալ: Պաշտամենտը պայմանագիրը վավերացնելու համար հիմք ընդունեց ոչ թե սույիալ-տնտեսական հետևանքների թվային կոնկրետ կամ մոտավոր ցուցանիշները, հնարավոր ռիսկերի բացահայտման հիման վրա կառուցված տնտեսագիտական վերլուծությունները, այլ՝ տնտեսության վրա դրա ազդեցության վերաբերյալ գործադիրի դրական սպասումներն արտացոլող եզրահանգումներն և հավաստիացումները: Ըստ դրանց, նախանշվել է ընդամենը 3 կոնկրետ ցուցանիշ. ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո Հայաստանը կստանա Եվրասիական տնտեսական միության փարածք ներմուծվող ապրանքների

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

մաքսային տուրքերի գումարի 1,13%-ը, ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի բարձրացման հետևանքով Հայաստան ներմուծված ապրանքատեսակների մասով գնաձային ճնշումները կլինեն 0,3 %-0,6 % միջակայքում, ԵԱՏՄ անդամակցությունը հավելյալ 2.5 տոկոս տնտեսական աճ կապահովի: Թե վերջին երկու ցուցանիշները ինչպես են հաշվարկվել և թե որքան կավելանա Հայաստանից ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման ծավալը, ինչ ազդեցություն կունենա ԵԱՏՄ-ի անդամակցությունը ՀՆԱ-ի և ազգային արժույթի վրա, ինչպես նաև ԵՄ նախընտրության հետապրանքաշրջանառության վրա, քննարկումներում երկրորդական նշանակություն է տրվել:

■ Կողմ քվեարկած բոլոր խմբակցությունների տեսակետներում քաղաքական վերաբերմունքն այն հարցին, թե որքանով է ԵԱՏՄ անդամակցությունը սահմանափակում ՀՀ ինքնիշխանությունը՝ կապված հատկապես պայմանագրի հավելվածներից բխող այն կարգավորման հետ, ըստ որի՝ ԵԱՏՄ հանձնաժողովն իր իրավասությունների սահմաններում կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման անդամ պետություններում, փաստացի բացակայում էր: Խորհրդարանական քննարկումներում շրջանցվեցին նաև 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից եվրասիական տնտեսական ինտեգրացիոն նախագծերին Հայաստանի միանալու մասին որոշման պատճառները: Մինչդեռ այս գործոնը կարևոր էր նախ որովհետև կար հասարակական-քաղաքական մեծ հետաքրքրություն, երկրորդ՝ այն վճռորոշ ազդեցություն ունեցավ ԵՄ-ի հետ մշակված և նախատրոագրման պատրաստված Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի ստեղծելու մասին պայմանագրի շուրջ բանակցությունների վրա:

■ Կողմ քվեարկած բոլոր խմբակցությունների դիրքորոշումների հիմքում ընկած էր միևնույն հիմնավորումը՝ Հայաստանի և ԼՂՀ տնտեսական ու ռազմական անվտանգության երաշխավորման անհրաժեշտությունը, չնայած ԵԱՏՄ-ն, ըստ հիմնադիր պայմանագրի, հետապնդելով տնտեսական համագործակցության և ինտեգրացման նպատակներ, կարող է առնչվել միայն տնտեսական անվտանգությանը վերաբերող խնդիրներին կամ կարգավորումներին: Կողմ քվեարկած ոչ իշխանական ուժերը՝ ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՕԵԿ-ը և հատկապես ՀՅԴ-ն, քննարկումներում անվտանգության գործոնին տրվող առաջնությունը բխեցնում էին այլընտրանքի բացակայության գաղափարից:

■ Պայմանագրի վավերացմանը կողմ քվեարկած ԱԺ խմբակցությունների՝ հազվադեպ դրսևորվող միասնականությունը այլընտրանքի բացակայության կարծրափայային գաղափարի վրա կառուցելը բացահայտում է արտաքին քաղաքականությանը և հատկապես Ռուսաստանին առնչվող հարցերում խորհրդարանական խմբակցություններից 5-ի՝ նույն ուղենիշներով առաջնորդվելու իրողությունը: Այն ընդգծում է արտաքին մարտահրավերների վերաբերյալ իշխանական և ոչ իշխանական բևեռների ընկալումների նույնականությունը:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

■ Պայմանագրի վավերացման քվեարկության ժամանակ բոլոր 6 խմբակցությունները (ԲՀԿ-ն՝ որոշ վերապահումներով) առաջնորդվել են մասնակցայնությունն ապահովելու սկզբունքով: 131 պարզամավորների քվեարկությանը մասնակցել է 111-ը, թեև իրականում քաղաքական դիրքորոշում դրսևորել է 124-ը, եթե նկատի առնենք, որ 13 պարզամավոր, գրանցված լինելով, չի մասնակցել քվեարկությանը: Ընդ որում 6 խմբակցություններից 5-ը քվեարկության օրը գրանցվել է ողջ կազմով և չի ունեցել որևէ բացակա: Բոլոր 7 բացակաները եղել են ԲՀԿ-ից: Ավելին՝ գրանցված, բայց քվեարկությանը չմասնակցած 13 պարզամավորներից 10-ը ևս ներկայացնում են ԲՀԿ-ն, ինչով փաստարկվում է վավերացման հարցում ԲՀԿ-ի երկակի վարքագիծը:

Եվրասիական կողմնորոշումը նախընտրական ծրագրերում

Աժ 6 խմբակցություններից 5-ը՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն և ՕԵԿ-ը, «կողմ» են քվեարկել պայմանագրին, «Ժառանգություն» խմբակցությունը՝ ամբողջությամբ դեմ: Կողմ և դեմ քվեարկած խմբակցությունները պայմանագրի նկատմամբ իրենց կողմնորոշումները պայմանավորել են գլխավորապես քաղաքական գործոններով՝ խնդիրը դիտարկելով Հայաստանի և ԼՂՀ-ի անվտանգության ապահովման երաշխիքների համատեքստում: Այս մոտեցումը հիմնականում չի արտացոլում խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի էությունն ու փորձաքննությունը, ինչը կարելի է բացատրել երեք հիմնական գործոնով:

■ 2012թ. նախընտրական ծրագրերը մշակելիս և հանրայնացնելիս՝ ՀՀ արտաքին քաղաքական վեկտորներն ուղղված էին ԵՄ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծմանը և դրա իրավապայմանագրային հիմքերի ձևավորմանը, մինչդեռ ԵԱՏՄ-ի ստեղծումը, որպես եվրասիական փորձաշրջանում փոփոխադարձաբանական ինտեգրացիոն մեխանիզմ, դեռևս գործում էր Ռուսաստանի կողմից հերևողականորեն զարգացվող գաղափարների մակարդակում:

Դեռևս ակնառու և չափելի չէր ԵՄ ԱԼԳ ծրագրի և հարկապես դրան մաս կազմող վեց երկրների կողմից ԵՄ-ի հետ ասոցացման հակվածությանը Ռուսաստանի Դաշնության հակադրությունը, դրա հենքի վրա միջազգային լարվածության և որպես հետևանք՝ պետությունների ինքնիշխանության, փորձաքննության ամբողջականության պահպանման և անվտանգության ապահովման հարցերում նոր մարտահրավերների առաջացման հավանականությունը: Դրանց հետ կապված գործոնները, որոնցով խորհրդարանական ուժերը հիմնավորեցին ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրին իրենց քվեարկությունն ու սկզբունքային դիրքորոշումը, նախընտրական ծրագրերը կազմելիս դեռևս առկա չէին:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

■ Բացի «Ժառանգություն» խմբակցությունից, մյուս ուժերն իրենց նախընտրական ծրագրերում քաղաքական, տնտեսական, ռազմական և որևէ այլ տեսակի նոր միությունների, դաշինքների մեջ մտնելու, ինտեգրվելու խնդիր չեն առաջադրում: Ծրագրերում առավելագույնը շեշտվում է արդեն ձևավորված և գործող հարաբերությունների, ձևաչափերի կապարելագործումը, զարգացումը, խորացումը, ստանձնած պարտավորությունները կապարելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը թույլ է տալիս ընթացք քննելու, թե որքանով են խորհրդարանական ուժերի ծրագրերը ձկուն՝ հնարավոր մարտահրավերների և ռիսկերի կանխատեսման հարցում:

ՀՀԿ. Նախընտրական ծրագրում Եվրոպական միության հետ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի կնքման գործընթացը դիտարկվել է որպես անայլընտրանք իրողություն և հստակ ամրագրվել է գործընթացը փրամաբանական ավարտին հասցնելու հանձնառությունը:

Քաղաքական մեծամասնություն ունեցող խորհրդարանական ուժը 2012թ. իր նախընտրական ծրագիրը կազմելիս առաջնորդվել է ոչ թե Ռուսաստանի հետ համագործակցության առկա իրավապայմանագրային հարաբերությունների մակարդակից դուրս գալու, այն խորացնելու կամ ընդլայնելու, որևէ կազմակերպության մեջ ինտեգրվելու, այլ ընդամենը առկա պայմանագրերի իրագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: ՀՀԿ-ի կողմից ԵԱՏՄ պայմանագրի վավերացումը բացահայտում է սեփական ծրագրին հակադրվելու իրողությունը:

ՕԵԿ. Ծրագրում ամրագրվել է «Հայաստան-Ռուսաստան ռազմավարական գործընկերության, իրավահավասարության, բարեկամության և փոխադարձ շահերի վրա հենված հարաբերությունների զարգացման» վերաբերյալ դրույթը, թեև հասկանալի չէ, թե ինչ է ենթադրում «զարգացում» հասկացությունը. արդյո՞ք այն ենթադրում է ընդհանուր տնտեսական տարածք ստեղծելուն ուղղված միության մեջ ընդգրկում կամ արդյո՞ք վավերացված պայմանագրից բխող հարաբերություններն իսկապես խարսխված են իրավահավասարության և փոխադարձ շահերի հարգման՝ ծրագրում ամրագրվող սկզբունքի վրա: ՕԵԿ-ը նաև պաշտպանում է Եվրոպական միության հետ իրականացվող նոր հարևանության ծրագրի պարզաձիրականացմամբ Հայաստանի ժողովրդավարության զարգացմանը, տնտեսական, քաղաքական համակարգերի և անվտանգության մեխանիզմների արդիականացմանը հասնելու գաղափարը: Մինչդեռ ԵԱՏՄ պայմանագրի վավերացմանը կողմ քվեարկելուց ոչ առաջ և ոչ էլ հետո ՕԵԿ-ը չի հիմնավորել, թե ԵՄ ասոցացման ծրագրերին փաստացի հակադրվող որոշումը որքանով է համընկնում կամ հակասում հատկապես քաղաքական համակարգի և ժողովրդավարության զարգացման ծրագրային սկզբունքներին:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՀՅԴ. Արտաքին քաղաքակրթության հայեցակարգը կառուցել է ազգային համընդհանուր շահերի պաշտպանության սկզբունքի վրա՝ Հայաստանը և Սփյուռքը դիտարկելով որպես մեկ ամբողջություն: Ծրագրում աշխարհաքաղաքական կողմնորոշումների փոփոխության, նոր կառույցների անդամակցության անհրաժեշտության մասին որևէ ամրագրում չկա: Ի սկզբանե ԵԱՏՄ-ին միանալու որոշումը ՀՅԴ-ն դիտարկել է ազգային անվտանգության ապահովման համատեքստում: Անդամակցության անխուսափելիության մասին խմբակցության համոզմունքը մեկնաբանվում է որպես «թուրք-ադրբեջանական փանդեմի հակահայկական պլաններին դիմակայելու» ծրագրային դրույթի շրջանակում գործելու դրսևորում, ինչն, իհարկե, խիստ մեկնաբանելի է: ՀՅԴ-ն, ի տարբերություն մյուս խորհրդարանական ուժերի, պաշտպանում է արտաքին քաղաքականության կարևորագույն որոշումների ընդունումը հանրաքվեի առարկա դարձնելու գաղափարը: Չնայած դրան՝ ԵԱՏՄ անդամակցության հարցի շրջանակներում ՀՅԴ-ն շրջանցել է իր ծրագրի այս սկզբունքային պահանջը:

ԲՀԿ. Հանդես է գալիս «Արևելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում Հայաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական ենթակառուցվածքները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու, միաժամանակ նաև՝ հայ-ռուսական ռազմավարական գործընկերային հարաբերությունների խորացման դիրքերից՝ առանց պարզաբանելու խոսքը երկկողմ, թե՛ եվրասիական ընդգրկմամբ՝ բազմակողմ ձևաչափով հարաբերությունների մասին է: Քվեարկությամբ արտահայտված դիրքորոշման և ծրագրային մոտեցումների հակասականությունը դրսևորվում է հարկապես տնտեսական ենթակառուցվածքները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու համոզմունքի համատեքստում: Չնայած խմբակցությունն ունեցել է ԵԱՏՄ անդամակցությունը պաշտպանելու քաղաքական որոշում, քվեարկության ժամանակ հանդես է բերել հետաքրքիր երկակիություն. խմբակցության 36 անդամներից գրեթե կեսը՝ 17 պատգամավոր, կամ չի քվեարկել կամ բացակայել է:

«Ժառանգություն». Կուսակցության հայեցակետը եվրոպական փոփոխության սուպրազոնային պետության կերպումն է, որտեղ ազգային անվտանգությունը խարսխվում է մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների, պետության ինքնիշխանության պաշտպանության վրա: Խմբակցություններից միակն է, որը պետության ինքնիշխանության ապահովման միջոցը համարում է միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին ինտեգրումը՝ առանց կոնկրետագույն կամ բացառություններ կատարելու, և միակն է, որը դնում է Ռուսաստանի հետ հարաբերությունների վերանայման կամ վերակառուցման խնդիր՝ ենթադրաբար մակարդակով ամրագրելով ՌԴ-ի կողմից Հայաստանի նկատմամբ ոչ գործընկերային և ոչ իրավահավասար դիրքերից հարաբերվելու փաստը: Որպես հավասարակշռությունը վերականգնելու միջոց՝ «Ժառանգությունն» առաջարկում է առաջնորդվել Արևելյան գործընկերության շրջանակներում խորը և համապարփակ

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ազատ առելորի համաձայնագրի ընդունման և դրա բաղադրիչների իրականացման պարտավորություններով: Այս համապեքստում ԵԱՏՄ անդամակցության պայմանագրի ստորագրմանը սկզբունքորեն հակադրվելու «Ժառանգության» դիրքորոշումը խիստ ծրագրային է և բխում է կուսակցության գաղափարախոսությունից:

ՀԱԿ. Միասնական համապարփակ նախընտրական ծրագրի չունենալը փորձել է լրացնել ոլորտային հայեցակարգերի ու ռազմավարությունների մշակմամբ: Սակայն դրանք շրջանցել են արտաքին քաղաքական և պետական անվտանգության ոլորտները:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5-րդ գումարման ԱԺ 6-րդ նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում խորհրդարանն ընդունել է 132 օրենք (46 օրենսդրական նախաձեռնություն), որոնցից 12-ը «մայր» օրենքներ են, իսկ 117-ը` փոփոխություններ ու լրացումներ գործող օրենքներում: Օրենքների գրեթե կեսը` 64-ը, ընդունվել է արտահերթ նստաշրջանների ընթացքում: Ընդունված օրենքներից 13-ի հեղինակը ԱԺ պարզամավորներն են, 119-ինը` ՀՀ կառավարությունը: Ընդունված օրենքների գերակշիռ մասը վերաբերում է տնտեսական (63), պետաիրավական (24) և սոցիալական (14) ոլորտներին:

ՕՐԻՆԱՍՏԵՂԾ ԱՇԽԱՏԱՆՔ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Օրենսդրական գործառույթի իրացման արդյունավետության ցուցիչներ են առանցքային որոշումների նախագծմանը խորհրդարանի մասնակցությունը և հասարակական պահանջներին համարժեք արձագանքելու, դրանց իրավաքաղաքական բովանդակություն հաղորդելու կարողությունը: Այն իրացնելու գործիքներից են արտահերթ նիստեր ու նստաշրջաններ հրավիրելը, հանրային պահանջները օրենսդրական նախաձեռնությունների վերածելը: Դրանց կիրառման արդյունավետությունը պայմանավորված է խորհրդարանում իշխանական և ոչ իշխանական բևեռների հարաբերակցությամբ և փոխհարաբերությունների բնույթով: Այս առումով խորհրդարանում ավելի վաղ ձևավորված որոշ բացասական միություններ ԱԺ 6-րդ նստաշրջանում ընդգծվել են:

Արտահերթ նիստեր հրավիրելու` խորհրդարանական փոքրամասնության նախաձեռնությունների տապալում

Արտահերթ նիստեր և նստաշրջաններ հրավիրելու «արտոնությունը» ավանդաբար պարկանել է կառավարությանը և խորհրդարանական մեծամասնությանը: 6-րդ նստաշրջանում, սակայն, քաղաքական փոքրամասնությունը, զուտ նախաձեռնողականության իմաստով, խախտել է այս ավանդույթը. 7 արտահերթ նիստ-նստաշրջաններից 5-ը հրավիրել է խորհրդարանական փոքրամասնությունը:

■ Դրանցից մեկը վերաբերել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքին: Նախաձեռնությունը բխում էր ԴԱՀԿ-ի կողմից արտադարական բռնագանձումների պրակտիկան վերանայելու հանրային պահանջից: Հեղինակը ՕԵԿ խմբակցությունն էր, որին ավելի ուշ միացել էին նաև ոչ իշխանական մյուս 4 խմբակցությունները: Ոչ իշխանական ուժերի նախաձեռնությամբ մյուս արտահերթ նիստը հրավիրվել է «Շրջանառության հարկի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նպատակով: Այն նույնպես բխում էր հարկային ռեժիմի փոփոխության իմպերատիվ պայմանը վերացնելու հանրային պահանջից:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երկու նիստերն էլ փապալվել են խորհրդարանական մեծամասնության կողմից քվորում չապահովելու պատճառով: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ նիստերը բոյկոտելու քաղաքական որոշումը մեծամասնությունը բացառել է ներկայացված օրինագծերին կառավարության դեմ լինելու հանգամանքով:

■ Դեկտեմբերին ԱԺ մեծամասնությունը փապալեց նաև խորհրդարանական ոչ իշխանական ուժերի նախաձեռնած արտահերթ նստաշրջանը, որի նպատակը ՀԱԿ խմբակցության պարզամավոր Արամ Մանուկյանի ու հասարակական այլ գործիչների նկատմամբ կիրառված բռնության դեպքերը դատապարտող ԱԺ հայտարարության ընդունումն էր: Նախաձեռնությունը փապալվեց փաստաթղթի բովանդակության հարցում իշխանության և ընդդիմության անհամաձայնության պատճառով: Խորհրդարանական մեծամասնության համար ընդունելի ձևակերպումներով ԱԺ հայտարարությունն ընդունվեց հաջորդ օրը ՀՀԿ և ՀՅԴ պարզամավորների նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի ընթացքում:

Միակ դեպքը, երբ հաջողվել է բոլոր քաղաքական ուժերի ներգրավմամբ արտահերթ նստաշրջան հրավիրել, արձանագրվեց փարեվերջին՝ դրամի արժեզրկման հետևանքով ֆինանսական շուկայում սրեղծված խուճապային վիճակի և չհիմնավորված գնաճի պատճառների շուրջ դռնփակ քննարկում կազմակերպելու նպատակով:

Արտահերթ կարգով ներկայացված նախաձեռնությունների փապալում

Համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի 104.2. հոդվածի՝ ոչ իշխանական խմբակցության բացառիկ իրավասությունն է նախաձեռնել արտահերթ համարված հարցի քննարկում: Սա կանոնակարգի այն կարևոր դրույթներից է, որն ուղղված է խորհրդարանական փոքրամասնության քաղաքական դերի մեծացմանն ու իրացմանը: Նստաշրջանի ընթացքում խորհրդարանական փոքրամասնությունն այս իրավասությունից օգտվել է 4 անգամ:

■ ՀԱԿ, ԲՀԿ և «Ժառանգություն» խմբակցությունների նախաձեռնությամբ հոկտեմբերին արտահերթ կարգով ԱԺ օրակարգ ընդգրկվեցին «ՀՀ-ում առաջացած կառավարման ճգնաժամը հաղթահարելու մասին» հայտարարության և Ընտրական օրենսգիրքը մինչև նստաշրջանի ավարտը բարեփոխելու մասին որոշման նախագծերը: «Ժառանգության» կողմից հրատապ էր համարվել և քննարկման ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման ռազմաքաղաքական հիմնադրույթների հայեցակետերի մասին» որոշման նախագիծը, իսկ ՀԱԿ-ը հրատապ էր համարել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում էր ՀՀ նախագահին զրկել արտակարգ դրության ժամանակ զինված ուժերը օգտագործելու իրավունքից:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծերից առաջինը չի քննարկվել կառավարության կողմից ներկայացված նախագծերն առավել հրապարակա ձանաչելու պատճառով: Մյուսները քննարկվել են և քվեարկությամբ մերժվել:

Փոքրամասնության նախաձեռնությունների յուրացում մեծամասնության կողմից

Այս երևույթն առանձին դրվագներով դրսևորվել է ԱԺ 5-րդ նստաշրջանի ընթացքում, սակայն օրինաչափության է վերածվել 6-րդ նստաշրջանում: Չախողելով ոչ իշխանական ուժերի օրենսդրական և քաղաքական տարբեր նախաձեռնություններ՝ ՀՀԿ-ն ինքն է հեղինակել նույնաբովանդակ նախագծեր, որոնց առանցքում կամ ոչ իշխանական ուժերի գաղափարական, ծրագրային մոտեցումներն են, կամ դրանց որոշակիորեն փոփոխված տարբերակները: Այս վարքագիծը միտված է ոչ այնքան փոքրամասնության հետ համաձայնության եզրեր գտնելուն, որքան այդ նախաձեռնությունների արգելափակմանը: 6-րդ նստաշրջանի ընթացքում գրանցվել է առնվազն 4 նման դեպք:

■ Սեպտեմբերին ՀՀԿ-ն տապալել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում ոչ իշխանական ուժերի առաջարկած փոփոխությունների քննարկման նպատակով հրավիրված արտահերթը, իսկ դեկտեմբերին ընդունեց նույն նպատակը հետապնդող և իր լուծումներով ոչ իշխանական ուժերին չբավարարող կառավարության հեղինակած օրենսդրական փաթեթը:

■ Քաղաքական մեծամասնության բոյկոտի պատճառով չքննարկվեց նաև «Շրջանառության հարկի մասին» օրենքում փոփոխություններ առաջարկող ոչ իշխանական ուժերի նախագիծը, բայց ավել ուշ ընդունվեց նույն օրենքում փոփոխություններ նախատեսող կառավարության օրինագիծը: Այն ուղղված էր ոչ թե շրջանառության հարկման դաշտում գործող արտեսվարող սուբյեկտների պահանջների բավարարմանը, այլ ընդամենը հետաձգում էր արտեսվարողների դժգոհությունը հարուցած պահանջներից մեկի՝ փաստաթղթավորման պահանջի գործողությունը 6 ամսով:

■ Քաղաքական և հասարակական գործիչների նկատմամբ բռնության դեպքերի կապակցությամբ հայտարարություն ընդունելու նպատակով ԱԺ արտահերթ նիստի հրավիրելու եռյակի նախաձեռնությունը տապալելուց անմիջապես հետո ՀՀԿ-ն, ՀՅԴ-ի հետ համագործակցությամբ, նույն նպատակով արտահերթ նիստի նախաձեռնեց, սակայն դրա արդյունքում խորհրդարանի անունից ընդունված հայտարարությունն իրականում խորհրդարանական մյուս ուժերի օժանդակությունը չստացավ այդ դեպքերին տրվող քաղաքական գնահատականների անհամարժեքության պատճառաբանությամբ: Այս առումով հայտարարության քաղաքական արժեքը նկատելիորեն նվազեց:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

■ Սեպտեմբերին խորհրդարանը քվեարկությամբ մերժեց պարզամավոր Նիկոլ Փաշինյանի հեղինակած «Սահմանապահ համայնքների մասին» օրենքի նախագիծը նստաշրջանի օրակարգ ընդգրկելու հարցը: Օրինագծի նպատակը ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության փակ գրավող համայնքների բնակիչներին որոշակի երաշխիքներ փրամադրելն էր՝ նրանց ազատելով հողի հարկից ու գույքահարկից և փոխհատուցելով սպառած բնական գազի, էլեկտրաէներգիայի, խմելու եւ ոռոգման ջրի վարձավճարների 50 տոկոսը: Նախագծին հավանություն չտալու դիրքորոշումը մեծամասնության ներկայացուցիչները հիմնավորեցին «սահմանապահ» ձևակերպման ընդունելի չլինելու հանգամանքով և կառավարության կողմից ավելի համապարփակ փաթեթ ներկայացնելու մտադրությամբ: Նոյեմբերին կառավարությունն ԱԺ-ին ներկայացրեց «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքը, որն ընդունվեց սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը հարկերից ազատելուն ուղղված օրենսդրական փաթեթին զուգահեռ:

Ընդդիմադիր պարզամավորներին արտահայտվելու իրավունքից զրկելու պրակտիկայի ձևավորում

Այս միտումը դրսևորվել է հիմնականում ԱԺ երկու պարզամավորների՝ Զարուհի Փոստանջյանի և Նիկոլ Փաշինյանի նկատմամբ՝ ԱԺ նիստերը նախագահողների կողմից նրանց խոսելու իրավունքից զրկելու, ԱԺ աշխատակազմին խոսափողն անջատելու հրահանգ տալու միջոցով: ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանված իրավասությունների շրջանակում այդ որոշումները երբևէ պարզաճ չեն հիմնավորվել, իսկ պարզամավորների արտահայտվելու իրավունքը սահմանափակվել է սովորաբար նրանց կողմից ՀՀ նախագահի, իշխանության ներկայացուցիչների հասցեին քննադատական ելույթներ հնչեցնելու ժամանակ: ԱԺ նախագահության այս մոտեցումը կարելի է ակնհայտորեն ընկրողական և անձնավորված համարել: Չնայած նման վերաբերմունքի իրավաչափությունն առնվազն արժանի է ուսումնասիրման, սակայն ոչ իրավական և ոչ էլ էթիկական տեսանկյունից խորհրդարանում երբևէ լուրջ ուշադրության, որևէ գնահատականի չի արժանացել նույնիսկ խորհրդարանական փոքրամասնության կողմից:

Հիմնական եզրակացություններ

■ Արտահերթ նիստեր նախաձեռնելու, արտահերթ կարգով նախագծերը քննարկման ներկայացնելու մեխանիզմների միջոցով քաղաքական փոքրամասնությանը տրված ինքնաիրացման, օրենսդրական գործընթացի վրա ազդեցության սկզբունքը փաստացի չի գործում, քանի որ մեծամասնության կողմից իրականացվում է այդ հնարավորությունները ձևականացնելու, դրանց քաղաքական և գործնական նշանակությունը նվազագույնի հասցնելու ընդգծված քաղաքականություն:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

■ Հարկ է նկատել, որ այս ռեսուրսները փոքրամասնությունը նախընտրում է կիրառել առավելապես քաղաքական հավակնոտ շարժառիթներով, որոնց հիմքում հասարակական պահանջներին արագ արձագանքելու, դրանք քաղաքականացնելու միջոցով «եռյակի» նկատմամբ հասարակական վստահությունը շահելու, քաղաքական կապիտալ կուտակելու նպատակադրումն է: Այդ հնարավորությունները սահմանափակելու, դրանց հակազդելու ցանկությամբ է, թերևս, պայմանավորված խորհրդարանական մեծամասնության կոշտ մերժողականությունը, որն ավելի է մեծացրել առձակատման դաշտը և նվազագույնի հասցրել փոխըմբռնման հնարավորությունները:

■ 6-րդ նստաշրջանում արձանագրված իրողությունները փաստում են, որ օրինաստեղծ աշխատանքում սահմանափակվում են ընդդիմության մասնակցայնության և ազդեցության ռեսուրսները, վրանգվում է երկխոսության մշակույթի ձևավորման հեռանկարը, փոքրամասնությունը ներկայացնող ուժերի համար ավելի շահեկան է դառնում արմատականացումը, նվազում է նրանց շահագրգռությունը այլընտրանքային գաղափարներ ու օրենսդրական լուծումներ առաջարկելու, կառուցողականություն հանդես բերելու հարցում:

■ Մեծամասնության անհանդուրժողականությունը, այլընտրանքային դաշտը քաղաքական շրջափակման ենթարկելու ցանկությունը, քննադատական խոսքի, գնահատականների արտահայտման հնարավորությունների սահմանափակումները կարող են ընկալվել որպես հասարակական-քաղաքական հարաբերություններին, առկա խնդիրներին համարժեք և կուսակցական շահերից դուրս արձագանքել չկարողանալու դրսևորում: Ուշագրավ է, որ այդ միտումներն ավելի ընդգծված դարձան նստաշրջանի մեկնարկին ՀՀԿ խորհրդի նիստում կուսակցության ղեկավար, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթից հետո, որտեղ նա իր կուսակցի պարզամտություններին հորդորել էր խորհրդարանական աշխատանքին վերաբերվել որպես «կռվի դաշտի», «խրամափի», չբացակայել, օժանդակել կառավարության գործունեությանը և քվեարկել կուսակցության ծրագրերն իրականացնելու առաջնահերթությամբ:

Քաղաքացիական շարժումների ազդեցությունը խորհրդարանի վրա

Աժ 6-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանն անդրադարձել է փարբեր ոլորտների վերաբերող հանրային պահանջներին, ներկայացրել որոշ օրենսդրական լուծումներ՝ հանդես գալով լոջիկոնախաձեռնողի, այլ արձանագրողի և արձագանքողի դիրքերից: Նախորդ նստաշրջանում փեղի ունեցան այս իրողությունը հաստատող մի քանի գործընթացներ:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

■ Փոքրամասնությունը համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ միայն այն բանից հետո, երբ «Դուրս մեր գրպանից» քաղաքացիական շարժումը ակցիաներ սկսեց երթևեկության կանոնների խախտումների համար պուզանքների չափերն իջեցնելու, նախկին պուզանքների համաներում կիրառելու, դրանք բռնագանձելու արտադարական որոշումները կասեցնելու, քաղաքացիների բանկային հաշիվների վրա արգելանք կիրառելու պրակտիկան վերացնելու հիմնական պահանջներով: Կառավարությունը և ԱԺ մեծամասնությունը օրենսդրական լուծումներ ապահովելու ուղղությամբ քայլեր ձեռնարկեցին, երբ ԱԺ փոքրամասնությունը հանդես եկավ խնդրի կարգավորման իր օրենսդրական առաջարկով:

Տեղեկանք: «Դատական ակտերի հարկադիր կատարման» ու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքներում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում փոփոխությունների անհրաժեշտությունն առաջացավ վճարովի կայանատեղերի, կարմիր գծերի, ճանապարհային երթևեկության խախտումները արձանագրող տեսալուսանկարահանող սարքերի տեղադրումից հետո: Սարքերի միջոցով խախտումների արձանագրումը հանգեցրել էր վարչական պուզանքների աճի: Դրան նպաստել էր նաև պուզանքների մասին քաղաքացիների պարզաձև ծանուցված չլինելը, ինչի հետևանքով շատերի հաշիվների վրա բանկերի կողմից արգելանք էր դրվել: Իրավիճակից դժգոհ բազմաթիվ քաղաքացիներ, «Դուրս մեր գրպանից» նախաձեռնության առաջնորդությամբ, բողոքի հանրային ակիբ բարձրացրեցին կառավարությունից և Ազգային ժողովից պահանջելով գտնել խնդրի կարգավորման նոր լուծումներ: Այս նպատակով խորհրդարանում շրջանառության մեջ դրվեցին մի քանի օրենսդրական նախաձեռնություններ: Դրանցից մեկը հեղինակել էր ՀԱԿ անդամ Նիկոլ Փաշինյանը: Նա առաջարկում էր նվազեցնել իրավախախտումների համար նախատեսված պուզանքների չափը: Կառավարությունը նախագծին դրական եզրակացություն չտվեց, ԱԺ-ն մերժեց դրա ընդգրկումը օրակարգ:

ՕԵԿ-ի նախագիծը, որը պաշտպանում էին նաև այլ խմբակցությունները, 2014թ. սեպտեմբերին, հանրային դժգոհությունների ֆոնին, ընդգրկվեց նստաշրջանի օրակարգ: Դեկտեմբերին, սակայն, ՀՀԿ-ն դեմ քվեարկեց այն քառօրյա ժողովի օրակարգ ընդգրկելուն: ՕԵԿ-ն առաջարկում էր վերականգնել քաղաքացիների սահմանադրական իրավունքը՝ սահմանելով, որ ԴԱՀԿ-ն քաղաքացու սեփականության նկատմամբ կարող է բռնագանձում իրականացնել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հարցը քննարկելու նպատակով ՕԵԿ-ը հանդես եկավ նաև արտահերթ նիստի հրավիրելու նախաձեռնությամբ, որը չկայացավ ՀՀԿ-ի քվորում չապահովելու պատճառով:

Սեպտեմբերին խնդիրը կարգավորող 2 օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ ՀՀԿ-ական պարզամավոր Արփինե Հովհաննիսյանը: Դրանցից մեկը վերաբերում էր Վարչական իրավախախտումների օրենսգրքին և սահմանում էր, որ իրավախախտումների մասին որոշումները պետք է հանձնվեն անձամբ հասցեատիրոջը, նոր դատապարտող անդորրագիրը պետք է ստորագրվի անձամբ հասցեատիրոջ կողմից: Երկրորդով փոփոխություն էր առաջարկվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում: Սահմանվում էր, որ պարտք ունեցող քաղաքացու հաշիվների վրա բանկը պարտավոր է արգելանք դնել միայն այն չափով, որը նշված է հարկադիր կատարողի որոշման մեջ: ՀՀԿ-ական պարզամավորի երկու նախագծերն էլ ընդունվեցին առանց դեմ քվեարկության:

Դրանցով սահմանվեցին խնդրի կարգավորման որոշակի մեխանիզմներ, սակայն փուլաբանության չափի և առանց դատարանի վճռի արգելանք դնելու հարցերը մնում էին բաց: Ավելի ուշ, դեկտեմբերին, խորհրդարանը քննարկեց կառավարության ներկայացրած օրենսդրական փաթեթը: Ու թեպետ դրանով փուլաբանության չափը մեղմացնող եղանակներ սահմանվում էին, սակայն քաղաքացու սեփականության վրա արգելանք դնելու հարցը, ըստ էության, մնաց չլուծված: Ըստ օրինագծի՝ արգելանք դնելու իրավունքի հարցը կորոշվի դատական ընթացակարգերով, եթե փուլաբանության չափը անցնի 200 հազար դրամը: Համաձայն խորհրդարանում ներկայացված ճանապարհային ուստիկանության տեղեկատվության՝ 2013թ. արձանագրված 1 մլն 257 հազար 933 իրավախախտումից միայն 9-ի դեպքում է փուլաբանության չափը գերազանցել 200 հազար դրամը: 2014թ. դեկտեմբերի 15-ին կառավարության նախաձեռնած արտահերթ նիստում փաթեթը քննարկվեց հատուկ կարգով և ընդունվեց 68 կողմ, 12 դեմ ձայնով:

■ Նույն սցենարով տեղի ունեցավ նաև «Շրջանառության հարկի մասին» օրենքում փոփոխությունների նախաձեռնումը. օրինագիծ ներկայացրեց ԱԺ փոքրամասնությունը, ապա նաև՝ կառավարությունը: Թեև այս դեպքում գործադիրը գնաց ոչ թե խնդրին հիմնարար և ամբողջական, այլ ժամանակավոր և կոսմետիկ լուծումներ փախու ճանապարհով: Այս դեպքում էլ ամեն ինչ սկսվեց շրջանառության հարկման դաշտում գործող տնտեսվարողների «Կասեցում» քաղաքացիական նախաձեռնության գործողություններից:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք: 2014թ. նոյեմբերի 19-ին Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց «Շրջանառության հարկի մասին» օրենքում և հետաձգեց նույն օրենքում հունիսին կատարված փոփոխությունների գործողության ժամկետը: Հունիսին խորհրդարանը հավանության էր արժանացրել կառավարության հեղինակած օրինագիծը, որով շրջանառության հարկի դրույքաչափը 3.5%-ի իջեցվել էր 1%-ի, բայց նաև պարտադիր փաստաթղթավորման պահանջ էր դրվել:

Փոփոխությունները, կառավարության հիմնավորմամբ, ուղղված էին խոշոր բիզնեսը հարկային դաշտ բերելուն և պետք է ուժի մեջ մտնեին 2014թ. հոկտեմբերի 1-ից: Փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների դժգոհությունն ու բողոքի ակցիաները կառավարությանը ստիպեցին փոխզիջման գնալ. ապրանքների ձեռքբերման, փաստաթղթավորման պահանջի գործողության ժամկետը հետաձգվեց մինչև փետրվարի 1-ը:

«Շրջանառության հարկի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծ էին ներկայացրել նաև խորհրդարանական ոչ իշխանական խմբակցությունները: Դրանցով առաջարկվում էր ՓՄՁ-ների աշխատակիցներին տալ ընտրության հնարավորություն, որպեսզի նրանք որոշեն՝ վճարել՝ 3,5% շրջանառության հարկ՝ առանց փաստաթղթավորմամբ, թե՞ 1%՝ փաստաթղթավորմամբ: Երկրորդ փոփոխությամբ առաջարկվում էր մեծացնել շրջանառության հարկվող շեմը և 58 միլիոնից դարձնել 150 միլիոն դրամ: Նախագծի քննարկման նպատակով 2014թ. սեպտեմբերի 30-ին հրավիրված արտահերթ նիստը ԱԺ մեծամասնության բոյկոտի պատճառով չկայացավ:

■ ԱԺ-ն դեկտեմբերին ընդունեց «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ առաջարկող փաթեթը, որով նոր մեթոդաբանություն և սկզբունքներ են ներդրվում հղիության ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման և վճարման կարգում: Հանրային քննարկման ներկայացված փաթեթը հասարակական դժգոհության ու բողոքի ալիք առաջացրեց, որի ազդեցությամբ էլ կառավարությունը վերանայեց փոփոխությունների նախագիծը:

Տեղեկանք: «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ սահմանող օրինագծի նախնական փարբերակով կառավարությունը նախատեսում էր աշխատող կանանց հղիության նպաստի չափը կրճատելու և որոշակի սահմանափակումներ կիրառելու միջոցով նպաստ վճարել նաև չաշխատող հղի կանանց: Սա բողոքի ալիք բարձրացրեց, ինչի ազդեցությամբ գործադիրը վերանայեց նախագիծը: Նոր նախագծով մայրության նպաստը հաշվարկվում էր աշխատավարձի 100%-ի չափով՝ անկախ աշխատած փարիների քանակից: Սահմանվում էր, սակայն, աշխատավարձի առավելագույն շեմ (1 մլն դրամ), որը գերազանցող գումարի դեպքում նպաստի վճարմանը մասնակցում է նաև գործատուն:

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը՝ կից փաթեթով, ընդունվեց 2014թ. դեկտեմբերի 1-ին, ձայների 68 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ: Օրենսդրական փաթեթի քվեարկությանը մասնակցեցին միայն ՀՀԿ խմբակցության պարզամավորները: ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՕԵԿ-ը, ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը» քվեարկությանը չմասնակցեցին այն հիմնավորմամբ, որ փաթեթը սահմանափակումներ ու ռիսկեր է պարունակում և լրացուցիչ բեռ դնում գործատուի ուսերին:

■ Այս դրսևորումները խոսում են գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների վրա հասարակական-քաղաքացիական շարժումների, նախաձեռնությունների ազդեցության աճի մասին: Սակայն դրա հիմքում ոչ այնքան հանրային դժգոհության առիթ դարձած խնդիրներին համակողմանի օրենսդրական լուծումներ տալու, այլ այդ շարժումների զարգացումը կանխելու ցանկությունն է: Այդ պարճառով, չնայած հասարակական-քաղաքացիական դաշտից եկող ազդակներին արձագանքելու դրսևորումներին, գործընթացը որևէ կերպ չի ազդում պառլամենտի նկատմամբ հասարակական վստահության մակարդակի վրա:

Պարզամավորի կարգապահության և հաշվետվողականության խնդրի օրենսդրական կարգավորումը 6-րդ նստաշրջանում

6-րդ նստաշրջանի ընթացքում պարզամավորների հաշվետվողականության և կարգապահության խնդիրները, երկու օրինագծերի ներկայացման համալրեքստում, արժանացել են համեմատաբար ավելի մեծ ուշադրության, բայց դրանց նկատմամբ ոչ համակարգային մոտեցում ցուցաբերելու ավանդույթը չի խախտվել:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Օրինագծերից մեկը, որը ԱԺ լիազուստար նիստում քննարկման փուլ չհասավ (խորհրդարանը մերժեց դրա ընդգրկումը նոյեմբերի 11-ին մեկնարկած քառօրյայի օրակարգ), վերաբերում էր պարզամավորների հաշվեպվողականության կառուցակարգի ներդրմանը:

Տեղեկանք: «Ժառանգություն» խմբակցության պարզամավոր Զարուհի Փոստանջյանի հեղինակած օրինագծով առաջարկվում էր Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով պարզամավորներին պարտավորեցնել յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում գործունեության վերաբերյալ հանդես գալ գրավոր հաշվեպվողությամբ: Այն մանրամասն տեղեկատվություն պետք է պարունակեր նստաշրջանի ընթացքում պարզամավորի ծավալած գործունեության մասին (հեղինակած օրենսդրական նախաձեռնություններ, հարցեր, ելույթներ, հայտարարություններ, քաղաքացիների ընդունելություններ, գործուղումներ, հանդիպումներ):

Պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նոյեմբերի 7-ի նիստում նախագծին դրական եզրակացություն չտրվեց՝ հիմնավորմամբ, որ հաշվեպվողականությունը բացառապես պարզամավորի հրամայական մանդատին բնորոշ սկզբունք է, իսկ ՀՀ սահմանադրության 66-րդ հոդվածով պարզամավորը նման կաշկանդվածություն չունի:

Սահմանադրությունը պարզամավորի հետկանչի մեխանիզմ չի նախատեսում: Այդ իմաստով հաշվեպվողականությունը պարզամավորի հանրային պարասխանատվության, մասնակցայնության և նախաձեռնողականության մակարդակը բարձրացնելու կարևոր գործառնություն է: Այն ոչ միայն հանրային վստահության վրա հիմնված քաղաքական կապիտալ կուտակելու և հաջորդ ընտրություններում «ներդնելու» միջոց է, այլ նաև պարզամավորների ակտիվության, արդյունավետության չափման լրացուցիչ հնարավորություն՝ վերաառաջադրվող պարզամավորների թեկնածությանը նախապարտություն տալու կամ չտալու հարցում կողմնորոշվելու համար:

Այս սկզբունքի կիրառման միակ ռիսկը հաշվեպվողականության ինստիտուտի ձևականացման հնարավորությունն էր: Նախագիծը չէր տալիս պարզամավորական ակտիվության և նախաձեռնողականության օգտակարության, արժեքայնության բացահայտման հստակ կամ գոնե մոտավոր չափորոշիչներ, իսկ զուտ քանակական ցուցանիշները չեն կարող ամբողջական պատկեր տալ պարզամավորի գործունեության վերաբերյալ: Նման դեպքերում սովորաբար առաջանում է արհեստականորեն պարզամավորի նախաձեռնողականության, ակտիվության և ներգրավվածության պատրանք ստեղծելու գայթակղություն:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դադեղով պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովում ծավալված քննարկումներից՝ նախագծի մերժման իրական պատճառը նման մեխանիզմի ներդրմամբ Ազգային ժողովը հնարավոր հանրային պարսավանքի առարկա չդարձնելն էր: Բավական է միայն նշել, որ ըստ parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ շուրջ 80 պատգամավոր կամ պառլամենտի 62%-ը 6-րդ նստաշրջանի ընթացքում լիազումար նիստերին ոչ մի ելույթ չի ունեցել և ոչ մի հարց չի փոխել: Իսկ դա նշանակում է, որ պատգամավորների մեծամասնության պասիվության պատճառով խորհրդարանն աշխատել է իր հնարավորությունների առավելագույնը 60%-ի չափով:

Խոսու՞մ է նաև այն փաստը, որ պատգամավորի հաշվետվողականության մեխանիզմ առաջարկող նախագիծը քառօրյա նիստերի օրակարգ ընդգրկելու որոշմանը դեմ են քվեարկել հիմնականում ԱԺ երկու ամենամեծ խմբակցությունները՝ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն, որոնք առանձնանում են պատգամավորների ամենամեծ թվով բացակայություններով:

Նույն պետաիրավական հանձնաժողովն ավելի վաղ հավանություն էր փոխել «Ժառանգություն» խմբակցության կողմից ներկայացված մեկ այլ օրինագծի, որն ածանցվում է վերոնշյալ մերժված նախագծի տրամաբանությունից, քանի որ ուղղակիորեն առնչվում է պատգամավորների՝ ԱԺ նիստերին և քվեարկություններին անձամբ մասնակցելու պարասխանափոխությանը: Այս նախագիծը, ի տարբերություն նախորդի, լրամշակվելուց հետո ընդգրկվել է ԱԺ լիազումար նիստերի օրակարգ և ընդունվել առաջին ընթերցմամբ:

Տեղեկանք: «Ժառանգություն» խմբակցության պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի, Ռուբեն Հակոբյանի և Թևան Պողոսյանի հեղինակած օրինագիծը՝ «ԱԺ կանոնակարգ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ընդդիմադիրների միակ նախագիծն է, որն ընդունվել է աշնանային նստաշրջանի ընթացքում: Դրանով ուրիշի փոխարեն գրանցվող կամ քվեարկող պատգամավորը համարվում է կարգազանց, և նրա նկատմամբ ԱԺ նախագահը կիրառում է օրենքով սահմանված կարգապահական միջոցներ՝ նկատողությունից մինչև նիստերից հեռացում: Մինչ այս փոփոխությունը՝ օրենքով կարգազանց էին համարվում այն պատգամավորները, ովքեր Ազգային ժողովի նիստի ընթացքում աղմկում են, վիրավորական արտահայտություններ են թույլ տալիս, չեն կատարում նիստը վարողի օրենքից բխող պահանջները:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք: Նախագիծը շրջանառության մեջ է դրվել 2012թ. փարեվերջին, իսկ 2013թ. սկզբին դրա ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հեղաձգվել է մինչև մեկ փարի ժամկետով: Այդ փարբերակում հեղինակներն առաջարկում էին ուրիշ փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու վերաբերյալ հանցագործության մասին հաղորդումներ կայացնել իրավապահ մարմիններին: Այս փարբերակին կառավարությունը դրական եզրակացություն չէր տվել՝ հիմնավորմամբ, որ պարզամավորների փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու հարցերը պետք է քննարկվեն էթիկայի հանձնաժողովում: Այս դրույթին դեմ էին արտահայտվել նաև գլխադասային պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովում: Արդյունքում, հեղինակները հրաժարվեցին դրանից և 2013թ. նոյեմբերին շրջանառության մեջ դրեցին նախագծի լրամշակված փարբերակը, որն արժանապալ գլխադասային հանձնաժողովի հավանությանը:

Քաղաքական կամք դրսևորելով կարգավորելու ԱԺ ընդունած օրենքների և որոշումների լեգիտիմության վրա ազդող այս հիմնահարցը՝ խորհրդարանը, սակայն, չի շտապում նախագիծը վերածել օրենքի: 2014 թվականի սեպտեմբերին (առաջին ընթերցմամբ) նախագիծը ընդունվել է 96 կողմ, 4 դեմ և 4 ձեռնպահ ձայնով: Դեմ են քվեարկել ՀՀԿ-ականներ Սուքիաս Ավետիսյանը, Վազգեն Կարախանյանը, Հակոբ Հակոբյանն ու Առաքել Մովսիսյանը: Երկրորդ ընթերցում անցնելու համար նախագիծը ընդգրկված էր աշնանային նստաշրջանի վերջին քառօրյա օրակարգում, սակայն չքննարկվեց:

Նախաձեռնելով կարգավորել բացականների փոխարեն գրանցվողներին և քվեարկողներին կարգապահական պարասխանաբարկության ենթարկելու հարցը՝ խորհրդարանը որևէ քայլ չի ձեռնարկում անհարգելի բացակայությունների համար պարասխանաբարկության խնդիրը վերջնականապես լուծելու ուղղությամբ, թեև ակնհայտ է, որ այլոց փոխարեն գրանցվելու և քվեարկելու պրակտիկան սահմանափակելու արմատները մեծապես անհարգելի բացակայությունների ծավալները նվազեցնելու դաշտում են: 2013թ. ապրիլի 16-ին Սահմանադրական դատարանը հիմնական օրենքին հակասող և անվավեր էր ճանաչել ԱԺ կանոնակարգ օրենքի այն դրույթները, որոնցով ԱԺ-ն քվեարկությամբ է որոշում անհարգելի բացակայությունների հիման վրա պարզամավորի լիազորությունները դադարեցնելու հարցը, և սահմանել էր, որ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայության դեպքում պարզամավորի լիազորությունները համարվում են դադարեցված իրավունքի ուժով (ex jure), համապարասխան արձանագրության հիման վրա: Չնայած ՄԴ-ի որոշումը ԱԺ-ին պարբարկեցնում էր կանոնակարգ օրենքում կարարել դրանից բխող փոփոխությունները և լրացումները, սակայն առ այսօր ոչ միայն ԱԺ խմբակցությունների, առանձին պարզամավորների կամ պարզամավորների խմբերի կողմից դրան ուղղված օրենսդրական նախաձեռնություն չի ցուցաբերվել,

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

այլև, ըստ ԱԺ պաշտոնական կայքի տվյալների, դեռևս քառօրյա նիստերի օրակարգում է պահվում ՍԴ-ի այդ որոշման կայացումից առաջ՝ 2013թ. փետրվարի 27-ին, առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի մի նախագիծ, որով մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պարզամավորի բացակայելն անհարգելի համարելու մասին որոշման կայացման լիազորությունը ԱԺ նախագահից փոխանցվում էր ԱԺ էթիկայի հանձնաժողովին, և որը խարսխված է պարզամավորի լիազորությունները ԱԺ-ի քվեարկությամբ դադարեցնելու հակասահմանադրական ճանաչված ընթացակարգի վրա: Արդյունքում ոչ միայն օրենսդրական փոփոխություններ կատարելու ՍԴ-ի իմպերատիվ պահանջն է մնում անկատար, այլ նաև պարզամավորների բացակայությունները հարգելի կամ անհարգելի ճանաչելն է դեռևս մնում ԱԺ նախագահի, ըստ էության, սուբյեկտիվ գնահատման դաշտում:

5-րդ գումարման խորհրդարանի 6-րդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած 133 քվեարկությունների կեսից ավելիից բացակայել է 15 պարզամավոր: Բացակայությունների 100 տոկոսանոց արդյունք գրանցել է ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը: Բոլոր պարզամավորների, այդ թվում Գագիկ Ծառուկյանի բացակայությունների մի մասն ԱԺ նախագահի կողմից համարվել է հարգելի՝ նրանց դուրս բերելով վրանգավոր գոտուց: Ազգային ժողովի 20 տարիների պատմության ընթացքում միայն մեկ անգամ են պարզամավորի լիազորությունները դադարեցվել մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու հիմքով. 2001 թ. հոկտեմբերի 9-ին Ազգային ժողովը որոշմամբ դադարեցրեց Վանո Սիրադեղյանի լիազորությունները:

Բյուջե 2015

2014 թ. դեկտեմբերի 4-ին ընդունվեց «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը՝ ձայների 71 կողմ, 46 դեմ հարաբերակցությամբ: ԱԺ 6 խմբակցություններից 5-ը դեմ արտահայտվեց բյուջեին: Հաջորդ տարվա գլխավոր ֆինանսական փաստաթուղթը պաշտպանեց միայն Հանրապետական խմբակցությունը:

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից (փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

■ Զարգացման վեկտորի փոփոխությունը և անդամակցությունը եվրասիական տնտեսական միությանը իր ազդեցությունը կթողնի 2015թ. բյուջեի վրա՝ մեծացնելով անորոշությունն ու ռիսկայնությունը:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

■ 2015թ. ֆինանսական գլխավոր փաստաթուղթը կկրի սույիալ-տնտեսական և քաղաքական ներքին ու արտաքին գործոնների ազդեցությունը: Համաշխարհային տնտեսության մեջ արձանագրված զարգացումները՝ պատժամիջոցներ Ռուսաստանի Դաշնության հանդեպ, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ձևավորմամբ և այդ կառույցին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված անորոշությունները, ԱՊՀ երկրների տնտեսական աճի ցածր տեմպերը, ՌԴ-ից ՀՀ եկող փորձաքրերի նվազումը և գնողունակության անկումը բացասական ազդակներ են ՀՀ տնտեսության, ինչպես նաև բյուջեի իրագործելիության համար:

■ 2015թ. պերբյուջեն ընդլայնողական քաղաքականություն չի նախատեսում. զարգացման կամ ընդլայնման չափը մոտ 60,0 մլրդ ՀՀ դրամ է, քանի որ մեծ է անորոշության դաշտը, իսկ նախորդ տարվա մակրոտնտեսական ցուցանիշները թերակատարումներով են ապահովվել: Ենթադրելի է, որ 2015թ. նս չի հաջողվի տնտեսական աճի հաշվին զարգացման բյուջե ունենալ:

■ 2015թ. առանց կոշտ միջամտությունների դժվար կլինի պահպանել գնաճը թույլատրելի մակարդակում:

■ Ներդրումային միջավայրի վարթարացման շարունակվող միտումը մտահոգիչ է դառնում: 2009թ.-ից ներդրումները ՀՆԱ-ի կազմում կրճատվում են: Այս ցուցանիշը նախատեսվում էր բարելավել 2013թ.՝ հասցնելով ՀՆԱ-ի 26,9%-ի, որն իրականում կազմեց 22,5%, իսկ 2014թ.՝ 21,8%: 2015թ. այն կկրճատվի նս 1 %-ով՝ կազմելով 20,5%:

Բյուջե 2014-ի հիմնական ցուցանիշները

2015թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1 տրիլիոն 191 մլրդ դրամ 2014թ. ցուցանիշը գերազանցելով 58 մլրդ դրամով: Ծախսերը կկազմեն 1 տրիլիոն 305 մլրդ դրամ, որը հավասար կլինի կանխատեսվող ՀՆԱ-ի 26.6 %-ին: Բյուջեի դեֆիցիտը 2015թ. կկազմի 114 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.34 %-ը:

Կառավարությունը 2015թ. 4,1 % տնտեսական աճ է նախատեսում և գնաճ 4+/-1,5 %-ի միջակայքում: Նախատեսվում է նաև, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2014թ. ցուցանիշը (23,4%) կգերազանցի 0.2 %-ով :

Բյուջեային հարկացումների մեջ գերակշռողը կրկին սույիալ-մշակութային ուղղությունն է 2014թ. 47.1 %-ի փոխարեն կազմելով ընդհանուր ծախսերի 47.9%-ը:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2015թ. մակրոտնտեսական կանխատեսումները, ըստ գործադիրի, կատարվել են իրատեսականության և չափավորության դիրքերից՝ տնտեսության հետագա զարգացման համար իրական նախադրյալներ ստեղծող մակրոտնտեսական միջավայր ձևավորելու նպատակով:

Բյուջեի առանձնահատկությունները

- Պետական բյուջեում բացակայում է Հայաստանի համար ամենագլխավոր տնտեսական իրադարձության՝ ԵԱՏՄ անդամակցության վերաբերյալ տնտեսական հաշվարկների, ինչպես նաև կանխատեսումների հատվածը: Ուղերձում ԵԱՏՄ-ն հիշատակվում է միայն 1 անգամ. «Անհրաժեշտ միջոցառումներ կիրականացվեն՝ հնարավորություն տալով հայրենական արտադրողներին սահուն անցնել ԵԱՏՄ երկրների հետ համագործակցության նոր պայմաններին»:
- ՀՀ դրամի փոխարժեքը բյուջեում նախատեսված է 411,25 ՀՀ դրամ, մինչդեռ ակնհայտ է, որ դրամի դեկրետային արժեզրկումից հետո կանխատեսված փոխարժեքը չի կարող հիմք հանդիսանալ 2015թ. ընթացքում բյուջեային քաղաքականություն իրականացնելու համար:

Տեղեկանք: Կառավարությունը 2015թ. բյուջեի վերաբերյալ ԱԺ հանձնաժողովներից, խմբակցություններից և պարզամտերից ստացել էր 387 առաջարկություն: Մասամբ կամ ամբողջությամբ ընդունել էր դրանցից 46-ը, անընդունելի էր համարել 119-ը, մյուսները՝ քննարկելի առաջիկա տարիների ընթացքում: Առաջարկները հիմնականում վերաբերում էին տարբեր նպատակների ֆինանսավորման համար բյուջեային հատկացումներ նախատեսելուն կամ ավելացնելուն: Դրանց ընդհանուր արժեքը, ըստ գործադիրի, 167 մլրդ դրամ էր:

Բյուջեն՝ ըստ ԱԺ խմբակցությունների

ԱԺ 6 խմբակցություններից 5-ը դեմ քվեարկեց 2015թ. պետական բյուջեի նախագծին: Հաջորդ տարվա գլխավոր ֆինանսական փաստաթուղթը պաշտպանեց միայն Հանրապետական խմբակցությունը:

ՀՀԿ-ն կողմ էր նախագծին՝ այն իրատեսական և հավասարակշռված համարելով, ԲՀԿ-ն դեմ էր՝ համոզված, որ փաստաթուղթը երկրում ստեղծված իրավիճակին համարժեք չէ: ՀԱԿ-ը դեմ էր «ռեժիմին և նրա իրականացրած բյուջեին»: «Ժառանգությունը» բյուջեով նախատեսվող որևէ ծրագիր իրատեսական չէր համարում: ՀՅԴ-ն կարծում էր, որ բյուջեն արտապուշտ է Հայաստանի տնտեսության վիճակը՝ առանց լուծումներ առաջարկելու: ՕԵԿ-ը ևս բյուջեի միջոցով սոցիալ- տնտեսական իրավիճակը շտրկելու հնարավորություն չէր տեսնում:

ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

5-րդ գումարման խորհրդարանի հետ իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության մակարդակը, ըստ ստացված դիմումների քանակի, աստիճանաբար նվազում է. երկրորդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովն ստացել է 13 դիմում, երրորդ նստաշրջանում՝ 6, չորրորդում՝ 2, իսկ հինգերորդում՝ 3 դիմում: 6-րդ նստաշրջանի ընթացքում էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը ստացել է ընդամենը 1 դիմում, որը վարույթ չի ընդունել:

■ 5-րդ գումարման Ազգային ժողովի 6-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողովի կազմում իր ներկայացուցիչներին փոփոխեց միայն ՀՀԿ խմբակցությունը:

■ ՀԱԿ-ը շարունակեց բոյկոտել հանձնաժողովի աշխատանքը, ու հանձնաժողովը դարձյալ ղեկավարեց իշխանական ամենամեծ խմբակցության ներկայացուցիչը. Հովհաննես Սահակյանին փոխարինեց Արփինե Հովհաննիսյանը:

■ Հանձնաժողովը նստաշրջանի ընթացքում գործեց 6-հոգանոց կազմով, որում ոչ ընդդիմությունը ներկայացված է ընդամենը 2 ՀՀԿ-ականով, ընդդիմությունը՝ ՀՅԴ-ՕԵԿ-«Ժառանգություն» եռյակով (1 անդամ ունի ԲՀԿ-ն): Ընդդիմություն-ոչ ընդդիմություն հավասարակշռությունը ապահովելու նպատակով իշխանությունը չչրապեց հանձնաժողովի կազմը համալրել ևս 1 ՀՀԿ-ականով, թեպետ ԱԺ կանոնակարգը նախատեսում էր դա անել նստաշրջանի սկզբում՝ հանձնաժողովի կազմը ձևավորելիս:

■ 6-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողովը ստացել է ընդամենը 1 դիմում. դիմումատուն պարզամավոր Զարուհի Փոստանջյանն է: Անցկացրել է ընդամենը 1 նիստ, որի ընթացքում որոշում է ընդունել պարզամավոր Զարուհի Փոստանջյանի դիմումը մերժելու մասին: Դիմումով Փոստանջյանը պահանջում էր քննարկել ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանի գործողությունների իրավաչափության հարցը: Նա, ըստ «Ժառանգության» պարզամավորի, նոյեմբերի 2-ին ԼՂՀ-ում անցկացված արտագնա նիստը վարել է «կոպիտ խախտումներով և առանց նիստի օրակարգը հաստատելու՝ միանգամից անցել հարցի քննարկմանը, որոշում կայացրել նիստը դռնփակ անցկացնելու մասին»: Էթիկայի հանձնաժողովը դիմումը վարույթ չընդունեց հիմնավորմամբ, որ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը կոլեգիալ մարմին է, որոշումներն ընդունել է քվեարկությամբ, իսկ էթիկայի հանձնաժողովը, համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի, իրավասու չէ քննարկել կոլեգիալ մարմնի ընդունած որոշումները:

ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տեղեկանք: Համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի՝ էթիկայի հանձնաժողովը եզրակացություն է ներկայացնում պարզամավորի կողմից Սահմանադրության 65-րդ հոդվածի 1-ին մասի խախտման («Պարզամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»), շահերի բախման առկայության, պարզամավորի էթիկայի կանոնների խախտման մասին, եթե ստանում է դրանց վերաբերող դիմումներ: Հանձնաժողովին կարող է դիմել յուրաքանչյուր ոք: Դիմումը քննելու համար օրենքը սահմանում է 30-օրյա ժամկետ, անհրաժեշտության դեպքում ավելացվում է ևս 15 օր:

Էթիկայի հանձնաժողովը՝ ձգնաժամում (փորձագիտական վերլուծություն)

6-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ էթիկայի հանձնաժողովի՝ ընդամենը 1 դիմում ստանալու և 1 նիստ հրավիրելու իրողությունը օրինաչափորեն արտահայտում է այդ հանձնաժողովի նկատմամբ վստահության նվազումը, հանձնաժողովի հեղինակության ու ազդեցության անկման խորացումը:

ԱԺ-ում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունը (ՕԵԿ-ի՝ ընդդիմադիր դաշտ տեղափոխվելու որոշմամբ պայմանավորված) ընդդիմությանը հնարավորություն էր տալիս էթիկայի հանձնաժողովի «վերակենդանացման» ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկել: Ուժերի նոր հարաբերակցության պայմաններում էթիկայի հանձնաժողովում ՀՀԿ-ն, ընդամենը երկու ձայն ունենալով, վերածվել էր փոքրամասնության: Չնայած ԱԺ կանոնակարգ օրենքով խորհրդարանական մեծամասնությունը հնարավորություն ուներ նստաշրջանի սկզբում, հանձնաժողովի նոր կազմի ձևավորման ժամանակ մեկ ներկայացուցիչ ապահովել և հավասարակշռել իշխանական և ոչ իշխանական ուժերի հարաբերակցությունը, սակայն, ինչպես 5-րդ, այնպես էլ 6-րդ նստաշրջանում չչորապես օգտվել այդ հնարավորությունից, ինչը խոսում է մեծամասնության գերինքնավստահության մասին: ԱԺ մեծամասնության նման վարքագիծը հարկապես հետաքրքիր էր հանձնաժողովում որոշումների հսկիչ փաթեթը չզիջելու նախկին գործելակերպի ֆոնին: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ խորհրդարանական մեծամասնությունը հիմնվել է ոչ իշխանական ուժերի՝ հանձնաժողովի արդյունավետությունը բարձրացնելու հարցում առանձնապես շահագրգռված և սկզբունքային չլինելու իրողության վրա:

ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հարկ է նկատել, որ մեծամասնության համար վստահության որոշակի երաշխիքներ էր ապահովում նախորդ նստաշրջաններում էթիկայի հանձնաժողովում որոշումների կայացման քվեարկությունների ժամանակ ԲՀԿ-ի դրսևորած երկակիությունը, ներքին պայմանավորվածություններով առաջնորդվելու պրակտիկան: Դրան զուգահեռ՝ ՀԱԿ-ը շարունակել է հանձնաժողովի աշխատանքը բոյկոտելու քաղաքականությունը՝ հրաժարվելով նաև հանձնաժողովը նախագահելու՝ ԱԺ կանոնակարգ օրենքով վերապահված իրավունքից:

ԱԺ էթիկայի հանձնաժողովի ազդեցության և հեղինակության անկման պատճառներից մեկն էլ ընդունված որոշումների գործնական և իրավական հետևանքներ չառաջացնելու հանգամանքն է:

ԱԺ 5-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողովը համապատասխան եզրակացությամբ պարզամավոր Առաքել Մովսիսյանի՝ լրագրողներին ուղղված արտահայտությունները որակեց որպես էթիկայի նորմերի խախտում. այդ մասին հանձնաժողովի որոշումը, հրապարակվելու փոխարեն, բաժանվեց պարզամավորներին: Չնայած այդ հանգամանքին, 6-րդ նստաշրջանի ընթացքում, մասնավորապես, ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից բխող մաքսային օրենսդրության փոփոխությունների փաթեթի քննարկման ժամանակ, Առաքել Մովսիսյանը հանդես եկավ պարզամավոր Նիկոլ Փաշինյանին ուղղված անպարկեշտ ժարգոնային արտահայտությամբ: Փաստն ապացուցում է, որ էթիկայի հանձնաժողովի որոշումներն էական ազդեցություն չեն ունենում պարզամավորների վարքագծի վրա: Հարկ է նկատել, որ նախորդ նստաշրջանի ընթացքում էթիկայի հանձնաժողովի ուշադրությանն արժանի բազմաթիվ դեպքեր են արձանագրվել (Նիկոլ Փաշինյան-Ջարուհի Փոստանջյան-Վարդան Այվազյան վեճը, Ջարուհի Փոստանջյանին ձայնի իրավունքից հաճախակի զրկելու որոշումների իրավաչափության հարցը և այլն):

Ջարուհի Փոստանջյանի կողմից ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանի գործողությունների իրավաչափության հարցով էթիկայի հանձնաժողովին դիմելը և հատկապես այն պարզառաբանությունը, որով հանձնաժողովը մերժել է նրա դիմումի քննարկումը, ի հայտ է բերում հնարավոր իրավական մեկ այլ հիմնահարց՝ կապված պարզամավոր(ներ)ի կողմից այլ պարզամավոր(ներ)ի գործողությունների իրավաչափությունը էթիկական տեսանկյունից քննարկման առարկա դարձնելու իրավունքի և հնարավորության հետ: ԱԺ կանոնակարգ օրենքի 24.3 հոդվածի համաձայն՝ պարզամավորները կարող են էթիկայի հանձնաժողովի դիմել միայն իրենց վերաբերող հարցերով. մասնավորապես, այս կամ այն գործունեությունը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն գիտական, մանկավարժական կամ սպորտագործական աշխատանք համարելու և շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին եզրակացություն ստանալու համար:

ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մնացած բոլոր դեպքերում, ներառյալ պատգամավորների վարքագծի, քայլերի և որոշումների՝ օրենքին համապատասխանելու հարցերով, օրենսդիրները ԱԺ էթիկայի հանձնաժողով կարող են դիմել միայն քաղաքացու կարգավիճակով, ինչը կարող է դիմում ներկայացնող պատգամավորի համար կարգավիճակի փոփոխություններից բխող խնդիրներ հարույցել:

Էթիկայի հանձնաժողովին այլևս չդիմելու իրողությունը փաստում է, որ հանրային շրջանակներում ամրապնդվել է համոզմունքը, որ հանձնաժողովի գործունեությունն ուղղված է ոչ թե խորհրդարանի ներքին բարոյաէթիկական նորմերի, համապատասխան մշակույթի ձևավորմանը կամ շահերի բախման, հայտարարագրման ինստիտուտի կայացմանը, այլ՝ դրանք հնարավորինս ֆորմալիզացնելուն:

Վահանգն Ղազարյան

ԵԱՏՄ անդամակցություն. ՀՀ արտաքին տնտեսական զարգացման առանձնահատկությունները

Արտաքին առևտուրը կարգավորող միջազգային նորմերը սահմանում են առևտրատնտեսական հարաբերությունների կարգավորման փարբեր ձևաչափեր՝ չկարգավորված առևտուր, արտոնյալ առևտուր, ազատ առևտրի ռեժիմ, մաքսային միություն, տնտեսական միություն և այլն: Առևտրատնտեսական այս ձևաչափերը ենթադրում են ինտեգրման փարբեր մակարդակներ ու փարբեր պահանջներ են առաջադրում:

ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող իրավապայմանագրային դաշտը կառուցվել է բազմակողմ (Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության արդյունքում ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորություններ, ԱՀԿ համաձայնագրեր) և երկկողմ (ԱՊՀ երկրների հետ կնքված ազատ առևտրի համաձայնագրեր, ԵՄ-ի հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագիր, (ԳՀՀ), ԱՄՆ-ի հետ երկկողմ Task Force ձևաչափ և այլ համաձայնագրեր) ձևաչափերով համագործակցության վրա:

Հայաստանի անկախության հռչակումից ի վեր արտաքին տնտեսական քաղաքականության գերակայություն են հայտարարվել եվրոպական արժեքները, ազատ մրցակցային շուկայի ձևավորման առաջնայնությունը, զարգացած երկրների տնտեսական առաջադեմ մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը և այլն: Առևտրատնտեսական դաշտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը մշտապես կրել է եվրոպական բարձր չափանիշներին մոտարկվելու ազդեցությունը, իսկ օրենսդրության բարելավման աշխատանքներն ուղղորդվել են ԵՄ չափանիշներով: Այլ երկրների հետ ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները կառուցվել են ոչ միայն մոտարկման, այլև ընդունված չափանիշների փոխադարձ ձանաչման սկզբունքների հիման վրա, ինչն ամրագրվել է գործող պայմանագրերով:

ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող իրավապայմանագրային հիմքերը դրվել են 1996թ. Գործընկերության և համագործակցության համաձայնագրի ստորագրմամբ, որն ուժի մեջ է մտել 1999թ.: ԳՀՀ համաձայնագիրը ՀՀ-ԵՄ հարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթուղթն է:

2004 թ. ՀՀ-ի ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի շրջանակներում ստեղծեց համագործակցության նոր հիմքեր՝ Հայաստանին գործընկեր-համագործակցող երկրի կարգավիճակի փոխափոխելով «հարևան երկիր» կարգավիճակի: Նոր քաղաքականության իրականացման նպատակով կողմերի ջանքերով մշակվեց և հաստատվեց ԵՄ-ՀՀ ԵՀՔ գործողությունների հնգամյա ծրագիրը, որի իրականացման համար ԵՄ-ի կողմից տրամադրվեց ֆինանսական և տեխնիկական զգալի օժանդակություն: Հայաստանը հետագայում ներգրավվեց նաև Արևելյան գործընկերության ծրագրում, որի շրջանակներում նույնպես ԵՄ-ի կողմից ստացվեց որոշակի աջակցություն:

2010թ. պաշտոնապես մեկնարկեցին ՀՀ-ԵՄ Ասոցացման համաձայնագրի բանակցությունները: Այն կոչված էր փոխարինելու գործող ԳՀՀ-ին, որի դրույթները ՀՀ-ԵՄ հարաբերությունների կարգավորման համար արդեն հնացած էին: Այդ համաձայնագրի բաղկացուցիչ մասն էր Խորը և համապարփակ ազատ առևտրի երկկողմ համաձայնագիրը, որի կարգավորման առարկան ՀՀ-ԵՄ առևտրադրամային հարաբերություններն էին:

ԽՀԱԱՀ կնքմամբ ՀՀ-ն հնարավորություն կունենար ԵՄ երկրների հետ առևտրային հարաբերություններում ապահովել ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժ: Համաձայնագրի դրույթների կիրառման արդյունքում ոչ ՀՀ-ի, ոչ ԵՄ-ի կողմից չէին գանձվի ներմուծման մաքսափոստեր, փոխադարձ առևտրում կնվազեցվեին տեխնիկական (ոչ-տարիֆային) արգելքները:

Մինևույն ժամանակ ՀՀ-ն ազատ կլիներ այլ երկրների հետ շարունակել ինքնուրույն առևտրադրամային քաղաքականությունը, տնտեսական շահերից ելնելով սահմանել արտաքին մաքսափոստեր ու կիրառել այլ միջոցառումներ, շարունակել նպաստավոր առևտրային ռեժիմի կիրառումը ԱՊՀ երկրների շրջանակում ու բանակցությունները երրորդ երկրների հետ, ինչպես նաև շարունակել ինքնուրույն անդամակցությունը ԱՀԿ-ին՝ ՀՀ դրոշի և ձայնի իրավունքի պաշտպանմամբ:

2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահը հանդես եկավ անսպասելի հայտարարությամբ, որ ՀՀ-ն մտադիր է միանալ ՌԴ-ի, Ղազախստանի և Բելառուսի միջև ձևավորված Մաքսային միությանը՝ հետագայում Եվրասիական տնտեսական միության հիմնադիր անդամ դառնալու ակնկալիքով: 2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվեց ՀՀ-ի ԵԱՏՄ-ին անդամակցության փաստաթուղթը, իսկ 2015թ. հունվարի 4-ից ՀՀ-ն դարձավ ԵԱՏՄ լիիրավ անդամ:

Ի փարբերություն ազատ առևտրի համաձայնագրերի՝ մաքսային կամ տնտեսական միության անդամակցությունը ենթադրում է անդամ երկրներում միասնական մաքսային/տնտեսական փարածքի ստեղծում, ինչն էլ իր հերթին ենթադրում է անդամ երկրների մաքսային փարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի միասնական դրույքաչափերի և ոչ փարիՖային կարգավորման համանման պահանջների կիրառում: Մաքսային միությունների ձևավորման հիմնական նպատակը ապրանքների մաքսային ձևակերպումների ծախսերը նվազեցնելն ու ընդհանուր մաքսային սահման ունեցող երկրների տնտեսական ինտեգրմանը նպաստելն է:

Ինտեգրման առավել բարձր մակարդակ են ապահովում տնտեսական միությունները, որոնք իրենց մաքսային փարածքների ներքո ապահովում են ոչ միայն ապրանքների և ծառայությունների, այլ նաև աշխատուժի ազատ տեղաշարժի դրույթներ:

Անդամակցելով Եվրասիական տնտեսական միությանը՝ Հայաստանը պարտավորվում է վարել այդ միության կողմից իրականացվող առևտրատնտեսական քաղաքականություն: Մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ երկրներում պետք է ապահովվեն հետևյալ նույնական մոտեցումները՝

- ▲ մաքսատուրքերի նույնական դրույքաչափեր,
- ▲ ներմուծման ձևակերպումների նմանապիպ պահանջներ
- ▲ ստանդարտացման, սանիտարական և ֆիտոսանիտարական նույն պահանջներ,
- ▲ հակազնազցման, փոխհատուցումների տրամադրման, մրավոր սեփականության իրավունքի պաշտպանության, ձեռնարկությունների գրանցման և այլ չափանիշների նույնականացում:
- ՀՀ-ի ԵԱՏՄ անդամակցության գլխավոր խնդիրն ընդհանուր մաքսային սահմանի բացակայությունն է, որը խանգարում է ՀՀ-ին օգտվել միասնական մաքսային փարածք ունենալու գաղափարից և թույլ չի տալիս լիարժեք իրացնել ԵԱՏՄ-ի հիմնական՝ ապրանքների ազատ տեղաշարժի առավելությունը: Ընդհանուր սահմանի բացակայությունը ենթադրում է ՀՀ և ԵԱՏՄ անդամ երկրների միջև ապրանքաշրջանառության իրականացում երրորդ երկրների և մաքսային ձևակերպումների միջոցով:
- ՀՀ-ում և ԵԱՏՄ անդամ երկրներում մաքսատուրքերը ձևավորված են փարբեր սկզբունքներով: Չունենալով բնական պաշարներ՝ ՀՀ-ն իր արտաքին քաղաքականությունը ձևավորել է ներմուծվող ռեսուրսների նկատմամբ ցածր մաքսատուրքերի կիրառման սկզբունքով, իսկ ԵԱՏՄ անդամ երկրները, որոնք

տիրապետում են բնական հարուստ պաշարների, իրենց շուկաները պաշտպանելու նպատակով սահմանել են ներմուծվող ռեսուրսների նկատմամբ բարձր մաքսափուրքեր: Անդամակցելով ԵԱՏՄ-ին՝ ՀՀ-ն նույնպես պարտավորվում է բարձրացնել իր մաքսափուրքերը, ինչը չի բխում մեր երկրի առևտրափոխանակական շահերից:

■ Ի փարբերություն ԵԱՏՄ անդամ երկրների՝ ՀՀ առևտրափոխանակական դաշտը կարգավորող օրենսդրությունը փարիներ շարունակ համապատասխանեցվել է ԵՄ օրենսդրությանը: Անդամակցելով նոր միությանը՝ ՀՀ-ն պարտավորվում է կիրառել ԵԱՏՄ-ում գործող չափանիշները, որոնք հիմնված են այլ սկզբունքների վրա: Մասնավորապես, ՀՀ-ն կիրառում էր ոչ թե ապրանքների պարտադիր ստանդարտացման, այլ՝ տեխնիկական կանոնակարգման մոտեցումը, իսկ ԵԱՏՄ անդամ երկրներում դեռ գործում է ԴՕՇ համակարգը: Նույնը վերաբերում է սանիտարական և ֆիտոսանիտարական պահանջներին, որոնք ՀՀ-ում և ԵԱՏՄ-ում հիմնված են փարբեր սկզբունքների վրա:

■ ՀՀ-ում և ԵԱՏՄ-ում էականորեն փարբերվում են փոխանակական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունների համակարգերը: ՀՀ-ն որդեգրել է ազատական քաղաքականություն, իսկ ԵԱՏՄ անդամ երկրներում դեռևս գործում է հսկողական մոտեցումը: Մասնավորապես՝ արտաքին փոխանակական գործունեությամբ զբաղվելը ԵԱՏՄ երկրներում հանդիսանում է թույլտվության առարկա գործունեություն:

■ Այլ երկրների հետ ՀՀ առևտրափոխանակական պայմանագրերը կարող են ուժի մեջ մնալ միայն այն դեպքում, եթե համանման պայմանագրեր ունեն նաև ԵԱՏՄ երկրները: Սա նշանակում է, որ ՀՀ-ն ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո առևտրափոխանակական բանակցություններ կվարի ոչ թե ինքնուրույն, այլ՝ ԵԱՏՄ «դրոշի ներքո»:

ԵԱՏՄ անդամակցության առանձնահատկությունները

■ ԵԱՏՄ անդամակցության բանակցային փուլում ՀՀ-ն ձեռք է բերել մի շարք նպաստավոր պայմանավորվածություններ: Մասնավորապես, մի շարք ապրանքների համար սահմանվել են անցումային դրույթներ, համաձայն որոնց՝ մաքսափուրքերի ընդհանուր դրույքաչափերը ՀՀ-ում կկիրառվեն հինգ փարվա անցումային շրջանից հետո, ինչը զգալի կթեթևացնի ՀՀ անդամակցության հնարավոր բացասական ազդեցությունը: Անցումային շրջանում ՀՀ մաքսային փարածք ներմուծված այն ապրանքները, որոնց մաքսափուրքերը դեռ նույնականացված չեն ԵԱՏՄ մաքսափուրքերին, կհամարվեն ՀՀ ներքին փարածքում օգտագործման ենթակա: Դրանց արտահանումը ԵԱՏՄ անդամ երկրներ հնարավոր կլինի իրականացնել միայն մաքսափուրքերի փարբերության գանձման արդյունքում:

- Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքած առևտրային համաձայնագրերը (Համաձայնագրի հավելված 3, հոդված 41) կհամարվեն անդամակցության բացառություն, ինչը նշանակում է, որ կպահպանվեն ՀՀ-Վրաստան, ՀՀ-Մոլդովա և ՀՀ-Ուկրաինա ազատ առևտրի համաձայնագրերը: Այս դրույթը, սակայն, չի համապատասխանում ԱՀԿ համապատասխան նորմերին և կարող է վիճարկման առարկա դառնալ ԱՀԿ շրջանակներում:
- Լինելով ԱՀԿ անդամ երկիր՝ ՀՀ-ն այդ կազմակերպությունում ներկայանում է որպես առանձին միավոր և իր դրոշի ներքո մասնակցում կառույցում որոշումների կայացմանը: Անդամակցելով ԵԱՏՄ-ին՝ ՀՀ-ն նախ պարտավորվում է վերաբանակցել իր իսկ ստանձնած պարտավորությունների շուրջ, ապա՝ ԱՀԿ-ին ներկայանալ ԵԱՏՄ դրոշի ներքո (ԱՀԿ անդամ է միայն Ռուսաստանը, ուստի ԵԱՏՄ անդամ երկրների շահերը այդ կազմակերպությունում կներկայացվեն միայն ՌԴ-ի կողմից):
- ԵԱՏՄ-ին անդամակցելով, ՀՀ-ն զրկվում է ինքնուրույն արտաքին առևտրափոխանակման քաղաքականություն իրականացնելու հնարավորությունից՝ պարզվիրակելով այդ իրավունքը ԵԱՏՄ խորհրդին:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վիլեն Խաչատրյան Կրթության գործընթացի թեկնածու, դոցենտ

ՀՀ 2014թ. ֆինանսական գլխավոր փաստաթուղթը կրում էր սույիալ-կրթության և քաղաքական ներքին ու արտաքին գործոնների ազդեցությունը: Համաշխարհային կրթության մեջ արձանագրված զարգացումները՝ պատժամիջոցներ Ռուսաստանի Դաշնություն հանդեպ, պատերազմական իրադարձություններ Ուկրաինայում, Եվրասիական կրթության միության (ԵԱՏՄ) ձևավորմամբ և այդ կառույցին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված անորոշություններ, դեֆլյացիոն միտումներ Եվրոպայում, փարեվերջին գրանցված արտարժույթային ճգնաժամ, Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) կողմից հոկտեմբերին դադարեցված դոլարի փայման՝ քանակական մեղմման (QE) քաղաքականություն, դոլարի դիրքերի ուժեղացում գրեթե ողջ համաշխարհային կրթության մեջ, ՌԴ-ից սրացվող փրանսֆերտների արժեզրկում և այլն, սրեղծեցին այն արտաքին բացասական միջավայրը, որը չէր կարող չանդրադառնալ ՀՀ կրթության զարգացման և ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վրա: Մյուս կողմից՝ Հայաստանի ՀՆԱ-ի աճի դանդաղող տեմպերը, դոլարի՝ փարեվերջին գրանցված աննախադեպ արժևորումն ու դրամի արժեզրկումը, պետական պարտքերի (ներքին և արտաքին) աճի բարձր տեմպերը, գրեթե ձախողված կենսաթոշակային բարեփոխումները, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ոչ նպաստավոր պայմանների սրեղծումը (շրջանառության հարկ, փաստաթղթաշրջանառության պահանջ և այլն) չէին կարող ապահովել զարգացման առաջանցիկ տեմպեր:

Արդյունքում ՀՀ 2014թ. պարբյուրով նախատեսված հիմնական ցուցանիշները թերակատարվեցին գրեթե 50%-ով՝ սրեղծելով մի իրավիճակ, երբ պարբյուրով կատարողականը կապ չունի նույն փաստաթղթով 2014-ի համար նախատեսված ցուցանիշների հետ:

2015թ. բյուջեի կատարումը, ենթադրվում է, որ կհիմնվի որոշ օրենսդրական և միջառք այլ բարեփոխումների ու հարկային վարչարարության վրա, սակայն չի լինի կրթության զարգացման արդյունքում ապահովված բյուջեային մուտքերի վրա ծախսերի ընդլայնման քաղաքականության արդյունք:

2015թ. բյուջեն իր ակնկալիքներով ունի որոշակի ռիսկայնություն, քանի որ համաշխարհային կրթության աճի տեմպերը դանդաղում են (3,3%), և Հայաստանը մեծ կախվածություն ունի Ռուսաստանի Դաշնությունից, որը 2014թ.-ին չկարողացավ ապահովել անգամ ՀՆԱ-ի 1%-անոց աճ: Ավելին՝ նավթի գներն ընդհուպ մոտեցել են 50 դոլարի սահմանագծին՝ ՌԴ-ին զրկելով դոլարի հոսքից, արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցները թուլացնում են այդ երկրի կրթությունը, կրճատվում են ռուսաստանյան փրանսֆերտների ծավալն ու գնողունակությունը և այլն:

2015թ. բյուջեն կրի արտաքին այլ գործոնների ազդեցությունը և՛ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը և մի շարք ապրանքների գնային թանկացումներ, նավթի գների անկում կամ ցածր մակարդակ, դոլարի դիրքերի ուժեղացում և եվրոյի դիրքերի թուլացում: Այս գործոններն իրենց հերթին են մեծացնում 2015-ի անորոշություններն ու ռիսկերը:

2015թ. պերսպեկտիվային ընդլայնողական քաղաքականությունը չի նախատեսում զարգացման կամ ընդլայնման չափը մոտ 60,0 մլրդ ՀՀ դրամ է, քանի որ մեծ է անորոշության դաշտը, իսկ նախորդ տարվա մակրոտնտեսական ցուցանիշները թերակատարումներով են ապահովվել: Ենթադրելի է, որ տնտեսական աճի հաշվին զարգացման բյուջե ունենալ 2015թ. և չի հաջողվի:

Բյուջեի ուղերձում ներկայացված սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջեային քաղաքականության հիմնական ուղղությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարությունը 2015-ին էական և առարկայական փոփոխություններ գրեթե չի նախատեսում: Իսկ Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցությանը վերաբերող դրույթներն ամբողջությամբ բացակայում են. ուղերձում ԵԱՏՄ-ն հիշատակվում է միայն 1 անգամ. «Անհրաժեշտ միջոցառումներ կիրականացվեն՝ հնարավորություն տալով հայրենական արտադրողներին սահուն անցնել ԵԱՏՄ երկրների հետ համագործակցության նոր պայմաններին»²:

Եվ վերջապես՝ ՀՀ դրամի փոխարժեքը բյուջեում նախատեսված է 411,25 ՀՀ դրամ, մինչդեռ ակնհայտ է, որ դրամի դեկորմենտի արժեզրկումից հետո կանխատեսված փոխարժեքը չի կարող հիմք հանդիսանալ ամբողջ 2015թ. ընթացքում բյուջեային քաղաքականությունը իրականացնելու համար: Չնայած նախատեսվում է փոխարժեքի 5%-անոց տարանում, սակայն դա ևս տարեսկզբյան իրականությունից շեղում է մոտ 50,0 ՀՀ դրամով և փաստում է մակրոտնտեսական կանխատեսումների վարարտեսական սցենարի բացակայությունը:

2014 թվականը մակրոտնտեսական ցուցանիշների միտումների առումով բարեհաջող չէր. ՀՆԱ-ի կանխատեսվող 5.2% աճի փոխարեն արձանագրվեց 3.2% աճ, որն, ի դեպ, կանխատեսում էին նաև ԱՄՀ մասնագետները³: Ակնկալվում էր 1.8% միջին գնաճ, սակայն դեկորմենտի «արտարժուրային ձգնաժամը» և գների տարանումը գնաճն ավելացրեցին մոտ 2 տոկոսով: 2014թ. բյուջեն ընդունելիս գնաճային ռիսկերը ցածր էին, իսկ 2015-ին՝ ավելի բարձր, ինչը նշանակում է, որ ԿԲ-ի համար առանց կոշտ միջամտությունների գնաճը թույլատրելի մակարդակում պահպանելը բավական դժվար կլինի:

² Հայաստանի Հանրապետության Կառավարության, 2015թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջեային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին գեկույց (Ուղերձ), էջ 7: <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/02/pdf/text.pdf>

³ World Economic Outlook October 2014, Legacies, Clouds, Uncertainties, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 60.

ՀՀ-ում, սկսած 2009թ.-ից, ներդրումները ՀՆԱ-ի կազմում կրճատվում են. 2012թ.-ին կանխատեսվում էր, որ կկազմեն 26,3%՝ 2009թ.-ի 34,7%-ի փոխարեն, իսկ դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության նկատմամբ կա վստահության պակաս և միջոցներ ներգրավելու խնդիր: Այս ցուցանիշը նախատեսվում էր բարելավել 2013թ.-ին հասցնելով ՀՆԱ-ի 26,9%-ի, որն իրականում կազմեց 22,5%, իսկ 2014թ.-ին՝ 21,8%: 2015թ.-ին այն կկրճատվի ևս 1 տոկոսով՝ կազմելով 20,5%: Սա նշանակում է, որ Հայաստանում առկա է ներդրումային միջավայրի վատթարացման միտում, որը ոչ մի կերպ չի հաջողվում բարելավել, թեև Doing Business-ի 189 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 45-րդ հորիզոնականը և մեկ տարում 4 կետով բարելավել է իր դիրքերը⁴:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2014թ. կազմել է 2,34%⁵, իսկ 2015թ. այն կմնա անփոփոխ: Պետք է նշել, որ 3%-ը չգերազանցող բյուջեի պակասուրդի ցուցանիշը խոսում է տնտեսական կայունության մասին, քանի որ նմանափոխ խնդիրներ ունեն մի շարք եՄ երկրներ, ու դրա արդյունքում բախվում են դժվարությունների՝ հատկապես պարտավորումների տոկոսադրույքների անկառավարելի աճի առումով: Համեմատելով 2014թ.-ը 2013թ.-ի հետ և ելնելով տնտեսության ճյուղերի իրական աճի միտումներից՝ պետք է նշել, որ 2013թ. կար 5,4% արդյունաբերության և 7,2% գյուղատնտեսության աճ, իսկ շինարարության մեջ՝ -10,8% անկում: Այսինքն, ի տարբերություն 2015թ.-ի բյուջեի նախագիծն ընդունելու ժամանակահատվածի՝ 2014թ.-ի բյուջեի կատարման համար կային ավելի նպաստավոր տնտեսական պայմաններ: 2014թ.-ին արդյունաբերությունը կաճի 2,0%, գյուղատնտեսությունը՝ 3,4%, շինարարությունը՝ 0,7%-ով, որոնք խիստ շեղումներ են 2014թ.-ի սկզբին արված կանխատեսումներից: 2014թ. նախատեսվող 5,2% ՀՆԱ-ի հավելաճը նվազել է մինչև 3,3%, նույն պարկերն է նաև մյուս ճյուղերում, ինչը ապացուցում է, որ 2015թ. պետական բյուջեի ընդունման նախապայմանները, մեղմ ձևակերպմամբ, այնքան էլ բարեհաջող չեն:

Դիտարկելով 2015թ. պետական բյուջեի ցուցանիշները՝ նկատում ենք, որ ՀՆԱ-ն նախատեսվում է 4,867.5 մլն դրամ, ՀՆԱ-ի իրական աճը՝ 104.1%, բյուջեի պակասուրդը՝ 2,34%, պետական պարտքը՝ 4,953 մլն ԱՄՆ դոլար: Սակայն արդեն իսկ առկա են մասնագիտական որոշ հաշվարկներ, համաձայն որոնց՝ ՀՀ պետական պարտքը գերազանցել է 5,1 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանագիծը: Ըստ դրանց՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշը ևս 2015թ. նախատեսվածից բարձր է լինելու և գուցե գերազանցի 5,5 մլրդ դոլարի սահմանագիծը:

Բյուջեների եկամուտների համեմատական վերլուծություն

2014թ. պետական բյուջեի եկամուտները, նախորդ տարվա 1,037.9 մլրդ դրամի փոխարեն, կազմեցին 1,135.9 մլրդ դրամ, այսինքն՝ գրանցվեց 102,0 մլրդ դրամի անկում:

⁴ <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia>

⁵ Առանց հաշվի առնելու դեկտեմբերի 20-ին 63 մլրդ դրամով այն ավելացնելու հանգամանքը (այն կքննարկվի առանձին):

2015թ. պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1,191.4, այսինքն՝ 2015թ. կունենանք գրեթե 55,5 մլրդ դրամի աճ: Վերջինի մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցող հարկային եկամուտները և պետական փուլքերը 2015թ. կկազմեն 1,138.7 մլրդ դրամ, որը նախորդ փուլքի ցուցանիշը գերազանցում է մոտ 46,6 մլրդ դրամով: Սա նշանակում է, որ փուլքի կունենա կամ հարկային բեռի ավելացում, կամ ստանդարտի եկամուտների բացահայտում, իսկ թե փոփոխությունների որ հատվածի վրա կընկնի այդ բեռը, ցույց կտան համապատասխան զարգացումները: Իհարկե, կարևոր նշանակություն ունի, թե ինչ աղբյուրների հաշվին են այդ եկամուտներն ավելանալու: 2015թ. մուլքերի ապահովումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորվում է ԵԱՏՄ-ի հետ համագործակցության ընդլայնմամբ և ՀՀ 1,13% մասնաբաժնի հնարավոր ապահովմամբ:

Վերլուծելով առանձին հարկատեսակների, փուլքերի, հաստատարված վճարումների, մաքսափուլքերի և բնապահպանական վճարների գծով մուլքերը պետք է նշել, որ 2015թ. ՀՀ կառավարության ուղերձում առկա են որոշակի կանխատեսումներ, և դրանք ցույց են տալիս, որ 6-8%-անոց աճն ամենահավանականն է:

Այս համատեքստում նկատելի է, որ հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռն ավելանալու է: Սա բյուջեի մուլքերի և եկամտային մասը համալրելու առումով դրական է, սակայն խնդիրն ուղղակի և անուղղակի հարկերի համամասնությունն է, քանի որ փոփոխության կայունության փաստակցունից նպատակահարմար է, որ աճեն ուղղակի հարկերը:

Բյուջեների ծախսերի համեմատական վերլուծություն

2014թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,246.4 մլրդ դրամ, որը նախորդ փուլքի նկատմամբ ավելի էր 137.7 մլրդ դրամով և հավասար էր ՀՆԱ-ի 25,4%-ին: 2015թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերը կկազմեն 1,305.5 մլրդ դրամ, որը հավասար կլինի կանխատեսվող ՀՆԱ-ի 26,82%-ին:

Ընդհանուր առմամբ, եթե դիտարկում ենք ՀՀ 2015թ. բյուջեի հիմնական ուղղությունները, ապակրկին գերակշռող էլինելու սոցիալ-մշակութային ուղղությունը. 2014թ. այս ոլորտի հատկացումները կազմում էին ընդհանուր բյուջեի ծախսերի 47,1%-ը, 2015թ. կազմելու է 47,9%: Դա նշանակում է, որ ՀՀ պետական բյուջեն ավելի մեծ սոցիալական ուղղվածություն է ստանում և բյուջեի վրա ավելանում է սոցիալական բեռը: Նման փոփոխությունը շարունակվելու պարագայում պետական բյուջեի հիմնական ուղղությունների գրեթե կեսն ապագայում կկազմի սոցիալական բլոկը: Սոցիալ-մշակութային ոլորտին հաջորդում են պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակարարական և արտակարգ իրավիճակների համակարգերի գծով հատկացումները՝ 21,4, որն ընդամենը 0,4%-ով է գերազանցում նախորդ փուլքի ցուցանիշը:

Հաջորդում են փոփոխության ճյուղերը՝ 2014թ. 12,2%-ի փոխարեն 2015թ. նախատեսվելով 9,1% հատկացումներ: Այս միտումներից ելնելով կարելի է պնդել, որ յուրաքանչյուր փարի պետական բյուջեի սոցիալական ուղղվածության բեռն ավելի է մեծանում, իսկ բյուջեն սովորաբար բնորոշում են ամենախոշոր ծախսային հոդվածների կամ խմբերի միջոցով:

Ի փարբերություն սոցիալական ուղղվածության՝ փոփոխական հարաբերությունների վրա կարարվող ծախսերը նվազում են, այսինքն՝ բյուջեն փոփոխական գործառույթ շատ քիչ է կատարելու:

Ուսումնասիրելով 2014թ. բյուջեային ծախսերն ըստ գործառական դասակարգման նկատում ենք, որ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վրա ծախսվել է 218,3 մլրդ դրամ, իսկ 2015թ. կծախսվի 239,7 մլրդ դրամ, այսինքն՝ ունենք մոտ 21 մլրդ դրամի աճ:

Պաշտպանության ծախսերը 2014թ. կազմել են 194,0 մլրդ դրամ, իսկ 2015թ. կկազմեն 198,9 մլրդ դրամ, 2015թ. հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 101,4 մլրդ դրամ, փոփոխական հարաբերությունների վրա նախատեսվում է ծախսել 85,4 մլրդ դրամ (2014թ.՝ 108,3 մլրդ դրամ): Ամենախոշոր խումբը 2015թ. կլինեն սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը, որոնք կկազմեն 390,5 մլրդ դրամ (2014թ.՝ 362,0 մլրդ դրամ):

Նշված ծախսային հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության, կրթության և սոցիալական պաշտպանության ծախսերն առաջանցիկ աճ կունենան, իսկ փոփոխական հարաբերությունների համար նախատեսված ծախսերը կնվազեն: Պետք է նշել, որ որոշ հոդվածներում աճի համամասնությունը 2014թ.-ի ծախսերի համեմատությամբ 2015թ. չի պահպանվել, այլ կիրառվել է ընտրողական կամ իրավիճակային մոտեցում:

Վերլուծելով 2014 և 2015թթ. պետական բյուջեներն ըստ բյուջեային ծախսերի փոփոխական դասակարգման՝ նկատում ենք մի շարք տեղաշարժեր: Այսպես՝ աշխատանքի վարձատրությունը 2014թ. կազմել է 106,8 մլրդ դրամ, իսկ 2014թ.-ին կկազմի է 132,9 մլրդ դրամ: Նշված աճը պայմանավորված է վերջին բարեփոխումներով, այն է՝ պետական ոլորտի աշխատավարձերի աստիճանական բարձրացմամբ:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը 2015թ. կկազմի 242,7 մլրդ դրամ (2014թ.՝ 231,3 մլրդ դրամ), փոկոսավճարները՝ 73,7, որից ներքին՝ 35,2, արտաքին՝ 38,5 (2013թ.՝ 63,4 մլրդ դրամ), այսինքն՝ մոտ 10 մլրդ դրամ ավելացել են վճարվող փոկոսները: Որոշակիորեն փոխվել են նաև դրամաշնորհները և սուբսիդիաները. 2015թ. դրանք համապատասխանաբար կկազմեն 134,4 և 32,6 մլրդ դրամ, նախորդ տարվա 114,7 և 24,9 մլրդ դրամի փոխարեն:

Մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերը 2014թ. կազմել են 24,4 մլրդ դրամ, իսկ 2015թ. կկազմեն 15,3 մլրդ դրամ: Ծախսերի տնտեսագիտական դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այստեղ ևս հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պեղական շինարարության, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծավալների ավելացման նախորդ տարիների միտումները փոխվել են. ամբողջական պահանջարկ ավելացնելով 2015թ. փորձ չի արվելու տնտեսությանն ակտիվություն հաղորդել: Դա է փաստում շենքերի և շինարարության վրա կատարվող ծախսերի կրճատումը նախորդ տարվա 126,0 մլրդ ՀՀ դրամից մինչև 91,9 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ պեղական շինարարության հաշվին այս տարի ևս շինարարությունը ուղղի չի կանգնի: Կրճատվել են նաև հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղվող ծախսերը, որոնք 2014թ. կազմել են մոտ 152,0 մլրդ դրամ, իսկ 2015թ. կկազմեն 109,9 մլրդ դրամ:

Բյուջեների պակասուրդների համեմատական վերլուծություն

2014թ. պեղական բյուջեի պակասուրդը կազմել է 110,5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2,34%-ը, իսկ 2015թ. այն կկազմի 114,1 մլրդ դրամ կամ ՀՆԱ 2,34%-ը, այսինքն՝ նախորդ տարվա համեմատությամբ ունենք պակասուրդի 3,6 մլրդ դրամով ավելացում: Պակասուրդի ֆինանսավորումը կիրականցվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին, որից ներքին աղբյուրներ՝ 103,9 մլրդ դրամ և արտաքին աղբյուրներ՝ 10,2 մլրդ դրամ: 2015թ. սպասվում է բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին թանկ ռեսուրսների ներգրավման ավելացում, որը նշանակում է արտաքին աղբյուրներից ներգրավվող միջոցների կրճատում: Այս տեսանկյունից պակասուրդի ֆինանսավորման հետ կապված արտաքին ռիսկերը հասցվում են նվազագույնի, սակայն սա նշանակում է նաև, որ ՀՀ ֆինանսական համակարգի համար արտաքին աղբյուրներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը դանդաղել է:

Այսպիսով՝ 2015թ. պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմը կլինի առավելապես ներքին և համեմատական առումով բարձր փոկոսադրույքներով ու գրեթե կրկնի նախորդ բյուջեային տարվա միտումները, որտեղ գերակշռում էին հիմնականում ներքին և բարձր փոկոսադրույքներով աղբյուրները:

Արտաքին և ներքին պարտքային քաղաքականությունը

2014թ. ՀՀ պեղական պարտքը սպասվում է, որ կկազմի գրեթե 4,675.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 4.588.0 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: 2015թ. նախատեսվում է պեղական պարտքն ավելացնել մոտ 288 մլն ԱՄՆ դոլարով՝ այն հասցնելով 4,953.0 մլն ԱՄՆ դոլարի, որից արտաքին պարտքը կկազմի 4,129 մլն, իսկ ներքին պարտքը՝ 505,0 մլն ԱՄՆ դոլար: Պետք է նշել, որ պեղական պարտքի մեջ 2014թ. արտաքին պարտքը գերազանցեց 3,958.0 մլն դոլարի սահմանագիծը, որից 462,0 մլն ԱՄՆ դոլարը կազմեց ՀՀ ԿԲ-ի պարտքը, իսկ ներքին պարտքը՝ 717,0 մլն ԱՄՆ դոլար (հնարավոր է այս թվերը վերահշվարկվեն):

ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների փոկոսադրույքների և վարկային միջոցների մասհանումների 2015-2017թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015թ. դրանց փոկոսագումարները կկազմեն 94,16 մլն ԱՄՆ դոլար, 2016թ. կհասնեն մոտ 92,71 մլն ԱՄՆ դոլարի, իսկ 2017թ. կավելանան՝ կազմելով 95,58 մլն ԱՄՆ դոլար: Սա փաստում է, որ կառավարությունն ունի ոչ այդքան ծանր պարտավորություններ, իսկ դժվարությունների կամ ծանրության կենտրոնը եղել է 2013թ.-ը:

Արտաքին վարկերի 2015-2017 թվականների սպասարկման ծախսերը՝ հիմնական գումարի մարումները 2015թ. կկազմեն 61,67 մլն ԱՄՆ դոլար, 2016թ.՝ 84,06 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը դրանք կլինեն 2017թ.՝ կազմելով 115,24 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ հանրագումարը 2017թ. կկազմի մոտ 210,0 մլն ԱՄՆ դոլար:

Հիմնական եզրակացություններ

Կարարելով «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համադրական վերլուծություն, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության, 2015թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջեային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույցը (Ուղերձ)՝ փորձենք ներկայացնել երեք հիմնական ուղղվածության եզրակացություններ:

Դրական զարգացումներ

■ Դրական պետք է համարել ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ցածր մակարդակի վրա պահելու հանգամանքը (114,1 մլրդ դրամ), քանի որ բարձր պակասուրդի պարագայում ՀՀ կառավարությունը ստիպված է ավելի մեծ միջոցներ ներգրավել ներքին և արտաքին աղբյուրներից, իսկ առկա պարտավորությունների պարագայում դա կարող է խիստ ռիսկային դիտարկվել: Իհարկե, նվազեցնել ՊԿՊ-ների շուկաներից միջոցների ներգրավումը 2015թ. չի հաջողվի, քանի որ արտաքին աղբյուրներից ներգրավվող միջոցները նվազել են: Որչակիորեն հնարավոր է, որ ՊԿՊ-ների փոկոսադրույքներն աճեն, քանի որ ՀՀ կառավարությունը ստիպված է լինելու ներքին շուկայից ներգրավել մոտ 103,0 մլրդ դրամ:

■ Աշխատանքի վարձատրությունը 2014թ. կազմել է 106,8 մլրդ դրամ, իսկ 2015թ. կկազմի է 132,9 մլրդ դրամ, այսինքն, պետական ոլորտի աշխատողների աշխատավարձը մոտ 26 մլրդ դրամով բարձրացնելով կրճատվի մասնավոր և պետական հատվածների աշխատավարձերի միջև առկա տարբերությունը, սակայն ցանկալի է, որ նման բարձրացումը ոչ թե ինքնանպատակ բնույթ կրի, այլ հիմնվի արտադրողականության բարձրացման վրա:

Բացասական զարգացումներ

- 2015թ. պեդագոգիկ լուրջ բացթողում է համարվում ճիշտ չկանխատեսված փոխանակային կուրսը, որը լուրջ դժվարություններ է առաջացնելու ողջ տարվա ընթացքում, ինչպես նաև պահանջելու է թե պետական պարտքի սպասարկման, թե ցանկացած դոլարային դրամաշնորհի, վարկի վերահաշվարկ:
- Պետական բյուջեի մեջ բացակայում են Հայաստանի համարամենագլխավոր տնտեսական իրադարձության՝ ԵԱՏՄ անդամակցության վերաբերյալ տնտեսական հաշվարկների, ինչպես նաև կանխատեսումների հատվածը, որը ևս լուրջ բացթողում է և բյուջեի հաշվարկների մեջ տարվա ընթացքում փոփոխություններ ենթադրող գործոն:
- Բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ հստակ համամասնություններ չկան, իսկ ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության, ապրանքների և ծառայությունների գնման ծավալները 2015թ. նվազեցվել են, որն ամբողջական պահանջարկի խթանման տեսանկյունից տնտեսության զարգացմանը չի նպաստելու:
- ԱՊՀ երկրների տնտեսական աճի ցածր տեմպերը, ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, բարձր գնաձև, ձգնաժամային երևույթները, նավթի համաշխարհային գների անկումը, դոլարի արժևորումը, ՌԴ-ից ՀՀ եկող փրանսֆերտների նվազումը և գնողունակության անկումը՝ որպես արտաքին գործոններ, կարող են ազդել ՀՀ տնտեսության, ինչպես նաև բյուջեի իրագործելիության մակարդակի վրա: Բացասական զարգացումներից կարելի է դիտարկել համաշխարհային տնտեսության մեջ առկա ռիսկային երևույթները՝ եվրոպական պարտքային ձգնաժամը, նախատեսվող 500,0 մլրդ եվրոյի հասնող LTRO-ն կամ նման մեծ քանակությամբ եվրո եվրոպական կենտրոնական բանկի կողմից տպելու նախաձեռնությունը, որը տանելու է եվրոյի արժեզրկման և գրեթե դոլարին հավասար փոխարժեքի ձևավորման:
- 2015թ. տնտեսության զարգացման հաշվին բյուջեի կտրաբույժում ունենալու է որոշակի դժվարություններ, մյուս կողմից՝ ԵԱՏՄ անդամակցությունը հանգեցնելու է գների բարձրացման, ՀՀ ԿԲ-ի կողմից կոշտ և գնաճի զսպման քաղաքականության իրականացման, որը հղի է տնտեսական բացասական հերևանքներով:
- ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների տրոստադրույթների և մայր գումարների միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք 2015թ. այնքան էլ մեծ չեն, սակայն ենթադրելի է, որ կառաջանան այդ միջոցների սպասարկման դժվարություններ, քանի որ ՀՀ դրամի բարձր փոխարժեքը ստիպելու է, որպեսզի ավելի մեծ գումարներ ծախսվեն պարտքերի մարման համար անհրաժեշտ քանակությամբ ԱՄՆ դոլար ներգրավելիս:

■ Բացասական զարգացումներից կարող է լինել 2014թ. տնտեսական ցուցանիշների կանխատեսումների չիրականացման ինտերցիան, որն, ամենայն հավանականությամբ, կտարածվի նաև 2015թ. վրա, քանի որ ՀՀ-ի հետ համագործակցող երկրներում, ինչպես նաև համաշխարհային տնտեսության մեջ նկատվող բացասական զարգացումներն ազդելու են ՀՀ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա՝ կապված տրանսֆերտների կրճատման, ներդրումների ծավալների նվազման և մի շարք այլ գործոնների հետ:

Անփոփոխ և փոփոխական իրավիճակներ

■ Համադրելով 2014 և 2015թթ. պետական բյուջեների փիլիսոփայությունը և գաղափարախոսական հենքը՝ կարող ենք փաստել, որ դրանք ունեն որոշակի տարբերություններ: 2015թ. աճի տեմպերը նվազեցվել են. 100,0 մլրդ դրամի հասնող աճը փոխարինվել է 60,0 մլրդ-ով: Բյուջեները տարբերվում են նաև իրենց զարգացման վեկտորներով. 2014թ. շեշտադրումը ներքին տնտեսության վրա էր, իսկ 2015թ. այն կունենա արտաքին՝ դեպի ԵԱՏՄ ուղղվածություն:

■ Համաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի տեմպերի դանդաղումը պահանջում է, որ երկու բյուջեներն էլ ունենան ոչ թե ամբիցիոզ նպատակներ, այլ պահպանեն կայունությունը և չկիրառեն խիստ ընդլայնողական քաղաքականություն՝ հնարավորինս երաշխավորելով բյուջեի կապարման իրատեսականությունը: Պետք է նշել նաև, որ ելնելով 47,1% (2014թ.) և 47,9% (2015թ.) տեսակարար կշիռ ունեցող սոցիալական և մշակութային ծախսերից՝ 2014 և 2015թթ. պետական բյուջեները կարելի է համարել սոցիալական, քանի որ բյուջեն բնորոշում են ըստ ամենախոշոր ծախսային ուղղվածության հոդվածների:

■ Պետք է նշել, որ 2015թ.-ը, որպես ֆինանսական տարի, լինելու է անորոշությունների և փոփոխությունների ժամանակահատված, և դրա գլխավոր առանձնահատկությունը լինելու է այն, որ անփոփոխ իրավիճակներ 2015թ. չեն լինի: Այսինքն՝ պետք է ակնկալել որոշակի տեղաշարժեր և տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններ, միաժամանակ դիմակայել այն նոր մարտահրավերներին, որոնք սպասվում են ԵԱՏՄ անդամներից յուրաքանչյուրին:

